Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ
ԳՐԱԳԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1905

№ 5 (158) XV ՏԱՐԻ ՄԱՅԻՍ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAI
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԱՇՆ

ՑԱՐԻԶՄԻ ԴԷՄ

Ներկայ համարում տպագրում ենք Ռուսաստանում գործող սոցիալիստ և յեղափոխական կուսակցութիւնների խորհրդաժողովի ծանուցումները, որ երկու շաբաթ առաջ լոյս ընծայեցինք „Դրօշակի" առանձին յաւելուածով։

Այդ խորհրդաժողովը ցարիզմի դէմ կռւող ուժերի համախմբման երկրորդ փորձն է։ Առաջինը, ինչպէս յայտնի է, տեղի ունեցաւ անցեալ տարի Պարիզում, Ֆինլանդական Ընդդիմադիր Կուսակցութեան նախաձեռնութեամբ։ Բացի իր ընդհանուր նշանակութիւնից, նա ունեցաւ և այն դրական հետևանքը, որ միևնոյն թշնամու դէմ կռւող կուսակցութիւնները դիւրութիւն ստացան մօտիկից ծանօթանալու իւրաքանչիւրի իրական ձգտումներին, գործունէութեան ներքին ձևերին, ուժին ու կարողութեան։

Յեղափոխական կեանքի յետագայ կարևոր դէպքերը առաջադրեցին պահանջ՝ գումարելու մի նոր խորհրդակցութիւն, այս անգամ միմիայն յեղափոխական կուսակցութիւնների միջև և աւելի կոնկրետ խնդիրների շուրջը։ Երկրորդ խորհրդաժողովի նախաձեռնութիւնը իր վրայ առաւ յայտնի Գապօնը, որը արտասահման անցնելով, իր եռանդուն ջանքերի առարկայ էր դարձրել բոլոր յեղափոխական ուժերի համախմբման գործը։ Նա ջերմ ցանկութիւն ունէր ժողովին մասնակից անել նոյնպէս Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւններն ու խմբերը, որոնք հրաժարւել էին Պարիզի խորհրդաժողովին մասնակցելուց և այնուհետև ոչ մի իրական տրամադրութիւն ցոյց չէին տալիս գործակցութիւն հաստատելու միւսների հետ։ Այս նոր ջանքերն էլ նպատակին չհասան։ „Փոքրամասնութիւն" կոչուած Ֆրակցիան (Ռուսական սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան պառակտումից և բաժանումից յետոյ սրա ձեռին է մնացել նախկին պաշտօնական օրգանը՝ „Իսկրա") հենց սկզբից ուղղակեց իր պատճառաբանուած դրաւոր մերժումը։ Նոյն կուսակցութեան երկրորդ ֆրակցիան, որ կրում է „մեծամասնութիւն" անունը, և միւսները, թէև ներկայացան խորհրդաժողովին և մասնակցեցին նախնական նիստերին, բայց շուտով հեռացան, պատճառ բռնելով „Լատիշ Սոցիալ-Դեմոկրատ Միութեան" ներկայութիւնը, որի դէմ բողոքում էր „Լատիշ Սոցիալ-Դեմոկրատ Կուսակցութիւնը" և որի դոյութիւնը, նրանց բոլորի առարկութեամբ, անհանական է Ռուսաստանի սահմաններում։ Ցիշեալ սոցիալ-դեմոկրատների հեռանալուց յետոյ՝ խորհրդաժողովը սկսեց իր կանոնաւոր պարապմունքները, մասնակցութեամբ ներքև ստորագրած կուսակցութիւնների։

Յատկապէս Կովկասի համար խորհրդաժողովը ընդունեց ռամկավարական ամենալայն սկզբունքների վրայ հիմնուած ֆեդերատիւ (դաշնակցական) քաղաքական կազմ, ներկայացուած խորհրդաժողովին Հ. Յ. Դաշնակցութեան և Վրաց Սոցիալ-Ֆեդեր.-Յեղափոխական կուսակցութեան կողմից։ Դրա հիմունքները պէտք է սահմանի Կովկասեան Հիմնադիր ժողովը, ամենալայն ապակենտրոնական հողի վրայ։ Կովկասեան ֆեդերատիւ կազմի, ինչպէս և խորհրդաժողովի սոցիալական ծանուցման մէջ շօշափուած խնդիրներին մենք կը նուիրենք մի շարք յատուկ յօդուածներ։

Հարկ ենք համարում աւելացնել նաև, որ Դաշնակցութեան ներկայացուցիչները խորհրդաժողովում, Կովկասի գործունէութեան վերաբերմամբ պաշտօնական ծրագիր չունենալով, ղեկավարւել են Կովկասեան վերջին բայօնական ժողովի վճիռներով և Դաշնակցութեան Խորհրդի հրահանգներով։ Որոշումների վերջնական հաստատումը պատկանում է առաջիկայ Ընդհանուր ժողովին։

Ահա խորհրդաժողովի պաշտօնական ծանուցումները։

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ,

Պատմական մեծ վայրկեան ենք անցկացնում մենք ամէնքս, ամբողջ մեծածաւալ ռուսական կայսրութիւնը, որ սեղմուած է ինքնակալ-կենտրոնական ռէժիմի երկաթէ ճիրաններում։ Բովանդակ աշխարհի հայեացքները իրաւամբ դառնում են դէպի մեզ և սրտատրոփ հետևում են սուր, համաշխարհային պատմութեան տարեգրութեան մէջ չտեսնուած ճգնաժամի ելևէջներին։ Դա սկիզբն է վերջաւորութեան, դա Ռուսաստանի Մեծ Յեղափոխութիւնն է, վերջին հաշուեյարգարումը՝ ժողովրդական բոլոր թշնամիների հաւատարիմ դաշնակից, ուժասպառուող բռնակալութեան և երկրի ջահիլ ու հզօր ուժի միջև,— երկրի, որ վերածնւում է դէպի նոր կեանք, յանձին իր բազմաթիւ ազգութիւնների։

Երկու հոյակապ, դաժան, անողոք պատերազմներ տանջում, պատառոտում են ներկայումս կայսերական Ռուսաստանը։ Դրսում և ներսում, հեռու Մանջուրիայի դաշտերի մէջ և քաղաքների ու գիւղերի փողոցներում, վիթխարի պետութեան բոլոր ծայրերում՝ հոսում է արիւնը, որոտում են հրացանները և ընկնում են զոհերը։

Ռուսաստանում չկայ հասարակական կեանքի կանոնաւոր ընթացք, չկայ քաղաքական մեխանիզմի կանոնաւոր պաշտօնավարութիւն, չկայ կանոնաւոր, երկրից ճանաչուած կառավարութիւն։ Ցիրական բռնաւորների այն խումբը, որը դեռ յամառութեամբ շարունակում է ինքզինքը կառավարութիւն անուանել,—նա ինքը խոստովանում է այդ։ Տեղ-տեղ նա արդէն իսկ հրաժարւում է իր սեփական իշխանութիւնից և յանձնում է այն՝ կամ Կիշինևի ու Գոմելի աւերիչներին, կամ զինուած սրիկայական խմբերին Բագուում, կամ „չօրնայա սոտնիային", վելիկօրօսական քաղաքներում,— այն բոլոր տարրերին, որոնց օգնութեանը դիմում էր ցինիկաբար և գլխակորոյս, իր մանիֆէստի մէջ, այլասերուած արքայական

տոհմի վերջին խղճուկ ներկայացուցիչը։ Դեռ երէկւայ ամենազօր կառավարութիւնը, որ ծածկում էր կայսերական ծիրանիով բոլոր յափշտակութիւններն ու հարստահարութիւնները, որոնք այդ ծածկի տակ փթթում էին ճոխ ու թունաւոր ծաղիկներով,—այդ կառավարութիւնը դարձել է այժմ պատերազմող կողմ, որ նստել, փակւել է իր ամրոցներում ու մարտկոցներում, հրապարակ է հանել գաղտնի ու յայտնի ոստիկանութեան առաջապահակները, սուիններին, զօրքի ու թնդանօթի պողպատեայ խուրձը։ Նա պատերազմ է յայտարարել երկրին և այդ քաղաքացիական կռիւը, յամառ, արիւնոտ ու անողոք, առաջ է տարւում սիստէմատիկ կերպով։

Կառավարութիւնը պատերազմ է յայտարարել երկրին. պատերազմող կողմերից միը պէտք է անպատճառ ոչնչանայ,—կամ երկիրը, կամ բռնակալութիւնը։

Նա մերժեց խաղաղութեան ազդարարներին ու բանակցուներին՝ սկսած օրինապահ ազգային օպոզիցիայից և ազատամիտ ներկայացուցչութիւնից, որոնք եկել էին իրենց համեստ բարեսորոգչական բաղձանքներով, մինչև Պետերբուրգի բանւորական ներկայացուցչութիւնը, որը հրապարակ էր եկել Գապօնի առաջնորդութեամբ, կտրուկ կերպով դնելու ցարիզմի առաջ՝ քաղաքների ու գիւղերի բանւոր ժողովրդի ամենահրատապ կարիքների հարցը։

Կռիւը յայտարարւած է և ամէն՛մէկը, ուզի չուզի, պէտք է ընտրութիւն անի երկու բանակների միջև։ Երրորդ ճանապարհ չկայ և չէ կարող լինել։ Կօմպրոմիսները անհնարին են, բանակցութիւնները՝ ուշացած, յարդարումները՝ յանցաւոր։ Ով մեզ հետ չէ, նա դէմ է մեզ։ Կառավարութեանը մնում է երկուսից մէկը՝ կատարելապէս անձնատուր լինել յեղափոխութեան առաջ կամ խորտակւել յեղափոխական հուժկու փոթորկից։

Մենք չենք, որ դնում ենք այդ ձևով խնդիրը. այդպէս դնում է ինքը կեանքը, այդպէս դնում է իրերի երկաթէ տրամաբանութիւնը և աչքերը փակել դրա առաջ՝ կը լինէր խայտառակ փոքրոգութիւն։

Եւ որովհետև կառավարութիւնը կապիտուլացիայի ոչ մի պատրաստականութիւն չէ ցոյց տալիս յեղափոխութեան փոթորկի առաջ, որ պատրաստ է պայթել,—ուստի մենք միայն կարող ենք կրկնել բանւորների այն նշանախօսքը, որ յունւարի 9-ից իվեր հնչում է Պետերբուրգի, Ռիգայի, Վարշավայի, Թիֆլիսի փողոցներում և որ հազարաւոր արձագանքներով որոտաց ամբողջ երկրի մէջ—ազատութի՛ւն կամ մա՛հ։ Եւ մեր կռիւը՝ կռիւ յեղափոխական կուսակցութիւնների այն բոլոր ազգերի, որոնք տաժանակիրների պէս կաշկանդւած են բռնապետական ռէժիմի շղթաներով՝ միշտ աւելի ու աւելի առաջ է գնում՝, ընդգրկելով միշտ աւելի մեծ զանգւածներ, հետզհետէ սրւելով, դիմելով միշտ աւելի ու աւելի վճռական, նոյնիսկ տէռորական միջոցների, և այնողդողդ ու ամուր քայլերով մօտենալով անխուսափելի վախճանին—ընդհանուր զինւած ապստամբութեան։ Այդ ապստամբութիւնը պիտի տապալէ արքայական տունը և պիտի յանձնէ երկրի ճակատագիրը ժողովրդի ձեռքը, զինւած քաղաքացիների և նրանցից ազատօրէն գումարւած հիմնադիր ժողովների ձեռքը, որոնք պիտի իրագործեն ազգութիւնների ինքնաորոշման մեծ սկզբունքը, ազատելով նրանց արտաքին ամեն մի ճնշումից, ապահովելով փոքրամասնութիւնը մեծամասնութեան հարստահարութիւնից, վերջացնելով կամ փոխադարձ, ազատ ու յօժարակամ համաձայնութեամբ յարդարելով բոլոր հին հաշիւները և ցարի բռնակալութեան ձեռքով խառնակւած յարաբերութիւնները։

Տեղական, ազգային, կուլտուրական-հասարակական և պատմական պայմանների ծայրայեղ այլազանութեան դիմաց՝ միմիայն այդպիսի հիմնադիր ժողովները կարող են կատարեալ ձեռնհասութեամբ և պայմանների ծանօթութեամբ վերջ տալ, յօգուտ ժողովրդային մասսաների, Ռուսական կայսրութեան ժամանակակից ռէժիմին, որ հիմնւած է նւաճման, բռնութեան, թալանի ու յափշտակութեան քաղաքականութեան վրայ, վերակազմելով նրան ռամկավարա-հանրապետական սկզբունքներով, համաձայն բոլոր ժողովուրդների շահերի, որոնց ինքնուրոյն, կուլտուրական, հասարակական և քաղաքական կեանքը ջախջախւած ու ոտնահարւած է եղել միմիայն ի նպաստ բռնապետութեան։ Եւ նրա անկումը կը փրկէ ոչ միայն ռուս ժողովրդին, ոչ միայն բոլոր միւս ազգութիւններին, որոնք կրկնակի կրում են նրա լուծը,—աւելին. բռնապետութեան անկումը կ՝ոչնչացնէ ամբողջ Եւրոպայում, ամբողջ քաղաքակիրթ աշխարհում՝ ռէակցիայի ամենագլխաւոր միջնաբերդը, նրա ամենաուժեղ պատնէշը, և դրանով կըտայ համամարդկային առաջադիմութեանը մի անպիսի զարկ, որի նշանակութիւնը չափազանց խոր ու ընդարձակ է, և անկարելի է այժմից իսկ գնահատել ու չափել այն՝ լիակատար կերպով։

Մեկնելով այդ սկզբունքներից և խոլապէս համոզւած լինելով, որ ներկայ վայրկեանի կրիտիքական բնոյթը հրամայաբար պահանջում է — կատարելապէս որոշ դիպւածների շարքում—բոլոր յեղափոխական ուժերի զուգաւորւած, միաժամանակեայ գրոհ բռնապետութեան դէմ,—ներքև ստորագրող կուսակցութիւնները, Գ. Գապօնի նախաձեռնութեամբ խորհրդաժողովի գումարելով՝ մշակեցին հետևեալ Յայտարարութիւնը, վերաբերեալ այն անմիջական քաղաքական նպատակներին, որոնք համապատասխանում են բոլոր ներկայացող կուսակցութիւնների ծրագիրների նւազագոյն պահանջներին, կամ թէ վերաբերւում են այդ պահանջներին, ինչպէս մասը ամբողջութեան։

1) Ռուսական կայսրութեան կատարեալ վերակազմութիւն՝ ռամկավարական-հանրապետական սկզբունքներով, հիմնւած ընդհանուր, ուղղակի, հաւասար ու գաղտնի ձայնատուութեան վրայ։

Իբրև միջոց դրա համար՝

2) Գումարումն Հիմնադիր ժողովի՝ ժողովրդական կամքի արտայայտութեան կատարեալ ազատութիւնը ապահովող պայմաններում (ազատութիւն խօսքի, մամուլի, համախմբման, ընկերակցութիւնների, երաշխաւորութիւն անհատի անձեռնմխելիութեան, ազատումն այնբոլոր անձանց, որոնք հալածման են ենթարկւած՝ իրենց քաղաքական կամ կրօնական համոզումների համար), հիմնւած ընդհանուր, ուղղակի, հաւասար ու գաղտնի ձայնատուութեան վրայ, և կազմւած Ռուսաստանի բոլոր վայրերի ներկայացուցիչներից, ի բաց առնելով Լեհաստանը և Ֆինլանդիան։

3) Ինչ վերաբերում է Ֆինլանդիային, որը պահպանում է ինքնավար-սահմանադրական պետութեան իր դիրքը և հէնց այդ պատճառով մասնակցութիւն չէ ընդունում կենտրօնական Հիմնադիր ժողովի մէջ, խորհրդաժողովին մասնակցող բոլոր կուսակցութիւնները միանում են ֆինն ժողովրդի և ամենից առաջ պրոլետարիատի

ձգման՝ իրագործել իրեն մատչելի միջոցներով՝ Հիմնադիր ժողովի գումարումը՝ հիմնված ընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի ընտրողական իրավունքի վրայ։

4) Պետերբուրգի Հիմնադիր ժողովի հետ միասին՝ գումարել նոյնպէս հիմնադրական լեհական Սէյմ վարշավայում. հին յարաբերութիւնների յարդարումն և նոր յարաբերութիւնների կարգաւորումն երկու կողմերի մէջ, վերը յիշած Հիմնադիր ժողովների, իբրև համապատասխան ազգութիւնների վերջագոյն ներկայացուցիչների՝ մէջ սկսած ազատ բանակցութիւնների միջոցով։

5) Հրաւիրել Կովկասի, իբրև ինքնավար և Ռուսաստանի հետ դաշնակցականապէս կապված մասի համար՝ Հիմնադիր ժողով, այդ երկրի ներքին ամբողջ կազմը ռամկավարական ֆեդերատիվ հիմքերի համեմատ վերակազմելու և մասնակցելու Կովկասի ինքնավարութեան երաշխաւորութիւնները մշակելու գործում՝ վերև բերած հիմունքներով։

Դրա հետ միասին Խորհրդաժողովը ցանկութիւն է յայտնում, որ աջողէր վաղօրօք համաձայնութեան գալ և այն կուսակցութիւնների հետ, որոնք ներկայանում են այլ ազգութիւններ ու քաղաքակրթական-ազգայնական պայմաններով առանձնայատուկ շրջաններ, այն սահմանագրական միջոցների վերաբերմամբ, որոնք անհրաժեշտ են նրանց ազատ զարգացման համար։

Ներքև ստորագրուող կուսակցութիւնները ենթադրում են, որ իրենցից իւրաքանչիւրը ամբողջապէս պահպանելով իր ծրագիրը, և մի բոպէ անգամ չդադարեցնելով նրա բոլոր կէտերի համար մղուող կռիւը, բոլորն էլ կարող են և պարտաւոր են՝ համագրել իրենց գործողութիւնները այն կարևոր վայրկեաններում, որոնք պահանջում են միաժամանակեայ գրոհ ընդհանուր թշնամու դէմ, յանուն այն խնդիրների, որոնք հանդիսանում են իբրև ընդհանուր՝ այդ բոլոր կուսակցութիւնների համար։

Ջանքերի այդ համագրութիւնը, գործի շահերի տեսակէտից նոյնքան անհրաժեշտ է, որքան և իւրաքանչիւր յեղափոխական կուսակցութեան ազատ, լիակատար և բազմակողմանի արտայայտութիւնը, իր ամբողջ անհատականութեամբ, նրա բոլոր ուժերի ծաղկումը և կռիւի համար նրա ունեցած և նրա ուժերին համապատասխանող միջոցների գործադրութիւնը։

Քաղաքացիներ,

Ռուսական մեծ յեղափոխութիւնը սկսված է։ Կառավարութիւնը և երկիրը միմեանց կռիւ են յայտարարել։ Ձեր անտարբերութեամբ և անվճռական դիրքով՝ ամբողջ մարդկութիւնը արատաւորող միապետութեան ոճիրներին մասնակից մի՛ լինէք։ Մեծ և ծանր է այն պատասխանատուութիւնը, որ ընկնում է իւրաքանչիւր գիտակից մարդու խղճի վրայ։ Երկուսից մէկը ընտրեցէ՛ք — կամ կազմալուծուող միապետութիւնը, կամ վերածնուող, նոր կեանքի դիմող ժողովուրդը։ Ով մեզ հետ չէ, նա մեր դէմ է։ Վճռական բոպէները՝ վճռական մարդիկ են ստեղծում։ Կեցցէ՛ ուրեմն Ռուսաստանի մեծ Յեղափոխութիւնը։

ՌՈՒՍԱՑ ՍՕՑԻԱԼ-ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԼԵՀԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻՍՏ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
ՖԻՆԼ. ԿՈՒՍԱԿ. ԳՈՐԾՕՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ
ՎՐԱՑ ՍՕՑ.-ՖԵԴ.-ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԼԱՏԻՇԱԿԱՆ ՍՕՑԻԱԼ-ԴԻՄՕԿ. ՄԻՈՒԹԻՒՆ
ԲԻԼՕՌՈՒՍԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻՍՏ. ԳՐՕՄԱԲԻԱ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ,

Յեղափոխական հրդեհի ծիրանագոյն լոյսը պարզ լուսաւորում է նրա իսկական բնաւորութիւնը, նրա ճշմարիտ նշանակութիւնը։ Դա կռիւ է ոչ միայն յանուն երկրի պետական իրաւունքի վերակազմութեան. տիրող ճգնաժամը առաջացել է ոչ թէ այն ընդհարումից, որ կայ ազատութեան անջնջելի պահանջի և բռնապետական կամայականութեան անզուսպ թափերի միջև։ Ոչ, աւելի լայն և աւելի խոր են նրա պատճառները, աւելի սուր և բազմակողմանի է նրա նշանակութիւնը։

Ամագին կայսրութեան բանւորական մասսաները տառապում են ոչ միայն կապիտալիստական ռէժիմի ընդհանուր չարիքներից, որոնք մռայլ ստուերի պէս հետևում են նրան միշտ և ամեն տեղ։ Ընդհանուր, մեծ, համաշխարհային սոցիալական հարցը, որի շուրջը պտտւում են ժամանակակից բոլոր խոշորագոյն անցքերը, մեզ մօտ աւելի ևս սուր կերպարանք է ստանում, շնորհիւ պատմութիւնից ժառանգած՝ ճորտական և նահապետական բռնակալութեան մնացորդներին։ Երկրի տնտեսական զարգացման այդ ինքնատիպ վիճակը մեզ մօտ աւելի քան որևէ ուրիշ տեղ՝ ազատութիւն է տալիս արտայայտելու կապիտալիզմի աւերիչ, պարազիտ հակումներին և աւելի քան ոևէ ուրիշ տեղ՝ անդամալուծում է նրա տարերային, ստեղծագործող ուժը։

Բանւոր դասակարգը հնարաւորութիւն չունի ազատօրէն կազմակերպւելու և իր կռիւը առաջ տանելու. նա ծանրացած է անօրինակ, նոյնիսկ կապիտալիստական տեսակէտից մեծ ծաւալ առած բանւորական պահեստի բանակով, որը իջեցնում է օրավարձը։ Գիւղը աւերւելով՝ նետում է մշտապէս դէպի բանւորական վաճառանոցը նորանոր մրցակիցներ, պահանջների ստոր մակերևոյթով, պատրաստ աշխատելու կոպէկների համար։

Հարկային լծի ծանրութիւնը անտանելի է դառնում։ Գիւղի վճարելու և գնելու ուժերը հնձված են արմատներից։ Քայքայւում է ներքին վաճառանոցը, ճգնաժամը դառնում է յարատև, քրոնիկական, անելանելի։ Երկրի ամբողջ տնտեսական կեանքը խպառ քայքայված է, նրա արդիւնագործական ուժերը՝ անդամալուծված։ Կառավարութիւնը մէկ միջոց է միայն կարողացել հնարել՝ դուրս գալու համար ֆինանսական դժուարութիւններից, որոնք անխուսափելի են այդպիսի պայմաններում. դա պետական պարտքերի կուտակումն է, որ սպառնում է գերի դարձնել բազմաթիւ գալոց սերունդներ, դարձնելով նրանց ակամայ պարտապաններ, որոնց վիճակված է պարտահատոյց լինել ցարիզմի շռայլութեան և վատնումների համար։

Միահեծան բռնապետութիւնը, ազգաբնակութեան բոլոր հացկատակ տարրերի այդ հաւատարիմ դաշնակիցը, հասցրել է երկիրը մի անել վիճակի, որից կարելի է դուրս գալ միայն սեփականատիրական յարաբերութիւնների հիմքերը շօշափող՝ մի շարք վճռական ձեռնարկներով։ Այդ հանգամանքի գիտակցումն ու ըմբռնումը աճում է անդիմադրելի կերպով։ Բանւորները, սարքելով առաջին համառուսական ընդհանուր քաղաքական գործադուլը, միաժամանակ առաջադրում էին իրենց տնտեսական պահանջների մի ամբողջ շարք։ Նրանց գործադուլը, որ մի հզօր արտայայտութիւն է իրենց դասակարգային համերաշխութեան աճման, ու-

նէր նրանց համար երկու նպատակ, երկու տեսակ նշանակութիւն՝ ընդհանուր-քաղաքական և անմիջական-տնտեսական։

Գիւղացիները, որոնք միանում են շարժման, ուժասպառ դարձած սակաւահողութիւնից, տանջուած հարկային ճնշման տակ, աշխատում են հնարաւորութիւն ձեռք բերել՝ ցանելու իրենց դաշտերի վրայ սովի տեղ՝ հաց։

Փողոց նետուած աշխատաւորուկ բանուորները, ամբողջ ընտանիքներ, թշուառութեան մէջ խրուած, աւերուած ճգնաժամով կամ լաւագոյն բանուորական ուժերի կորուստով,—ուժեր, որոնք կտրուած արդիւնագործող աշխատանքից, տասնեակ հազարներով անմեղ տեղը ոչնչանում են հեռաւոր Արևելքում,—նրանք բոլորը յուզւում են, պահանջելով օգնութիւն, պահանջելով հաց ու աշխատանք։

Երերուեցին ժողովրդային վարի խաւերը, շարժուեցին աշխատաւոր մասսաների ամենախորունկ շերտերը։

Եւ ո՞վ պիտի տեղաւորէ նեղ տաշտի մէջ՝ առաջացող յեղափոխութեան յորձանքը։ Անտանելի տառապանքների ու վիրաւորանքի ազդեցութեան տակ՝ բանուոր մարդու հոգին վառւում է զարհուրելի ատելութեամբ դէպի գոյութիւն ունեցող ամբողջ հասարակական կազմը։ Եւ երբ նա փողոց է դուրս գալիս՝ բարձր լսելի դարձնելու իր ձայնը, դա պարզապէս անօթի ստամոքսի ձայնը չէ, դա ճիչն է բազմատանջ հոգու, դա ըմբոստացումն է մարդու, որին ձգել են լուծը քարշ տուող եզան դերի մէջ, դա ձայնն է մարդու, որ իր իրաւունքներն է յայտարարում աշխարհիս բոլոր բարիքների վրայ՝ ստեղծուած իր կոշտացած ձեռքերով։ Դա զարթնումն է դասակարգային մեծ համերաշխութեան, որը կազմակերպում է աշխատանքի բանակը՝ կապիտալի բանակի դէմ։

Յեղափոխութեան սոցիալական և քաղաքական պահանջները անբաժանելի են։ Աշխատաւոր ազգաբնակութեան ընդարձակ մասսաների տնտեսական կարիքները այն աստիճան հասունացել ու սրուել են, որ նրանք բարձրաձայն յայտարարում են իրենց գոյութիւնը և միայն կոյրերը կարող են անտես առնել նրանց։ Կառավարութիւնը արդէն շտապում է օգտուել դրանից։ Արդէն նա հակադրում է մասսաների տնտեսական կարիքները՝ „հասարակութեան“ քաղաքական ձգտումներին։ Արդէն նա պատրաստ է դեմագոգի դեր ստանձնել և այս անգամ գիւղերում, նորից հրապարակ է նետում „սոցիալական միապետութեան“ ուրուականը, թշնամի ձևանալով միայն քաղաքական ռէֆորմների, և բարեկամ ձևանալով մասսաների տնտեսական վիճակի բարւոքման։ Ո՞ւշ է։ Խաբէութիւնը չափազանց աշկարայ է։ Ինքնակալ միապետութիւնը չափազանց անխզելի կերպով կապուած է գիշատիչ էինոմինիկութեան հետ, բուրժուազիայի և ազնուականութեան ամենահացկատակ տարրերի հետ, և չէ կարող վճռականութիւն ունենալ՝ չենայելու դրանց շահերը, վճռականութիւն, որը հարկաւոր է՝ շատ թէ քիչ զգալի բարելաւումներ մտցնելու համար մասսաների դրութեան մէջ։

Ինքը ժողովուրդը միայն կարող է անել այդ. նա միայն իր յեղափոխական ուժով, կարող է միաժամանակեայ կերպով՝ թէ կառավարութեան և թէ բուրժուազիայի դէմ՝ բաց անել առաջին խոշոր ճեղքերը տնտեսական շահագործման միջնաբերդում։

Մեկնելով այդ սկզբունքներից, ներքև ստորագրուած կուսակցութիւնները հաւաստում են, որ նրանք բոլորն էլ անհրաժեշտ են գտնում՝ կատարելապէս վերակազմել ժամանակակից Ռուսական Կայսրութիւնը ռամկավարա-հանրապետական հիմունքների վրայ, համաձայն բոլոր առանձին ժողովուրդների շահերին, ազատ գումարուած հիմնադիր ժողովների միջոցով։

Հետևեալ ռամկավարա-հանրապետական հիմունքները ընդունում են բոլոր ստորագրող կուսակցութիւնների կողմից, իբրև հիմունքներ իսկական ազատ ժողովրդական կառավարութեան։

1) Ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի ձայնաւորութիւն, առանց խտրութեան սեռի, կրօնի, ազգայնութեան, քսան տարեկանից սկսած, բոլոր ընտրութիւնների մէջ։

2) Շրջանների և համայնքների ընդարձակ ինքնավարութիւն։

3) Կիրառել դաշնակցական (ֆէդերատիվ) սկզբունքը ազգութիւնների յարաբերութիւնների մէջ, որոնք մնում են մէկ ընդհանուր պետական յարկի տակ։

4) Ուղղակի ժողովրդական օրէնսդրութիւն (Ռէֆէրենդում և Ժողովրդական Նախաձեռնութիւն), իբրև լրացումն ներկայացուցչական հիմնարկութիւնների օրէնսդրական գործունէութեան։

5) Համեմատական ներկայացուցչութիւն։

6) Պաշտօնեաների ընտրելի և դատելի լինելը։

7) Կատարեալ ազատութիւն խղճի, խօսքի, մամուլի, ժողովների, բանուորական դաշնակցութիւնների ու գործադուլների։

8) Ընդհանուր քաղաքացիական իրաւունքի հաւասարութիւն։

9) Երաշխաւորութիւններ՝ անհատի ու բնակարանի անձեռնմխելիութեան համար։

10) Անջատել եկեղեցին պետութիւնից և դպրոցը եկեղեցուց, սահմանել պարտադիր, բոլորի համար հաւասար, ընդհանուր աշխարհական կրթութիւն՝ հասասարական հաշուով և մայրենի լեզուով։

11) Հաւասար իրաւունք տալ լեզուներին և մտցնել տեղական լեզուները դատավարութեան սև ադմինիստրացիայի մէջ։

12) Խառը ազգաբնակութիւն ունեցող շրջաններում տալ հաւասար իրաւունք ամեն մի ազգութեան՝ իր թւի համեմատ մասնակցութիւն ունենալու բիւջէի մէջ, որը սահմանուած պիտի լինի քաղաքակրթական նպատակների համար, և տնօրինելու այդ միջոցները ինքնավարութեան հիմունքների վրայ։

13) Զրի դատավարութիւն։

14) Մշտական զօրքի փոխարինումն՝ տեղական ժողովրդային միլիցիայով։

Ներքև ստորագրող կուսակցութիւնները հաւաստում են նոյնպէս, որ համաձայն են ընդունել հետևեալ անմիջական սոցիալական-տնտեսական պահանջները, որոնք համապատասխանում են իւրաքանչիւր ներկայացուցած կուսակցութեան ծրագրի նեազագոյն պահանջներին, կամ թէ վերաբերում են նրանց, ինչպէս մասը ամբողջութեան։

Ա) Ութժամեայ աշխատանքի օր, երաշխաւորուած օրէնքով։

Բ) Սահմանումն նեազագոյն օրավարձի՝ զանազան զբաղմունքների համար, քաղաքի ու գիւղի մէջ։

Գ) Պետական ապահովագրութիւն դժբախտ պատահարներից, հիւանդութիւնից, ծերութիւնից և անաշխատութիւնից՝ պետութեան ու գործատէրերի հաշուով, ապահովագրողների ինքնավարութեան հիմունքների վրայ։

Դ) Աշխատանքի օրէնսդրական պահպանութիւն՝ համաձայն գիտական առողջապահութեան պահանջներին և երաշխաւորուած բանուորների կողմից նշանակած հսկողութեամբ։

Ե) Բանուորների պրոֆէսիոնալ կազմակերպութիւն, պրոգրէսսիվ ծաւալող մասնակցութեամբ՝ արդիւնաբերական հիմնարկութիւնների ներքին կարգաւորման գործում։

Զ) Աշխատանքի բօրսաներ և նրանց մասնակցութիւնը՝ բանուորական օրէնսդրութեան մշակման մէջ։

Է) Անուղղակի հարկերի վերացումն, բացի այն հարկերից, որոնք դրւում են պերճանքի առարկաների վրայ։ Մտցնել պրոգրէսսիվ տուրք եկամտի ու ժառանգութեան վրայ, և բոլորովին ազատել որոշ չափից պակաս մանր եկամուտները։

Ը) Համայնականացնել, այսինքն դնել հասարակութեան, աշխատաւոր, երկրագործ ազգաբնակութեան տրամադրութեան տակ՝ այն բոլոր հողերը, որոնց մշակումը հիմնւած է ուրիշի աշխատանքի շահագործման վրայ. ինչ վերաբերում է կօնկրետ ձևերի որոշման, այդ միջոցի իրականացման հետևողականութեան՝ դա թողնւում է առանձին ազգութիւնների պատկանող կուսակցութիւնների ձեռնհասութեանը, որոնք կը կարգադրեն խնդիրը՝ համաձայն իրենց երկրների տեղական յատուկ պայմաններին։

Թ) Հասարակական, քաղաքային ու համայնական տնտեսութեան զարգացումն. պետական և մունիցիպալ քաղաքականութիւն, որ կը նպաստէ կօօպերացիաների (ընկերակցութիւնների) զարգացմանը՝ խիստ ռամկավարական հիմունքների վրայ։

Ընդգծելով համաձայնութիւնը այդ կէտերի նկատմամբ, կուսակցութիւններից իւրաքանչիւրը դրանով մի վայրկեան իսկ չէ շեղւում իր ծրագրի ոևէ անհատական առանձնայատկութիւններից, որոնք համապատասխանում են յատուկ պայմաններին այն միջավայրի, ուր նա գործում է, կամ թէ համապատասխանում են ընդհանուր ոգուն այն սկզբունքների, որոնց վրայ հիմնւած է նա։ Բայց այդ բոլոր կուսակցութիւնները հաւասարապէս խոստովանում են, որ անհրաժեշտ է առաջ մղել ու անմիջապէս իրականացնել, ինչպէս հիմնադիր ժողովներում՝ և օրէնսդրական հիմնարկութիւնների մէջ այնպէս և անցողական յեղափոխական շրջանում, յաղթական աշխատաւոր ժողովրդի անմիջական յեղափոխական միջոցներով՝ այն մի շարք պահանջները, որոնք արմատական արժէք ունեն՝ քաղաքական և կալւածական տեսակէտից։ Այդ պահանջները պիտի ապահովեն պրոլետարիատի և ամբողջ աշխատաւոր մասսայի մարտական, հաստատուն դիրքերը, քաղաքական և տնտեսական, յետագայ կռուի համար—կռիւ, որը վերջնականապէս պիտի ազատէ ժողովուրդը ոչ միայն քաղաքական ստրկութիւնից, ոչ միայն ֆէօդալական և ճորտական ճնշման բոլոր մնացորդներից ու փշրանքներից, այլ և ժամանակակից բուրժուակապիտալիստական հարստահարութիւնից։ Թող ուրեմն, մեր քաղաքական նշանաբանների հետ միասին, բարձրաձայն հնչէ մեր կոչը՝ ուղղւած անմիջապէս ժողովրդի տնտեսական հարստահարողներին։

Աշխատա՜նք՝ աշխատաղուրկներին, հա՜ց՝ քաղցածներին. հողը և նրա արդիւքները՝ բոլոր աշխատաւորներին. կեցցէ՜ յեղափոխութիւնը, կեցցէ՜ սոցիալիզմը։

ՌՈՒՍԱՑ ՍՕՑԻԱԼ-ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
ՎՐԱՑ ՍՕՑ.-ՖԵԴ.-ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԼԵՀԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻՍՏ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԼԱՏԻՇԱԿԱՆ ՍՕՑԻԱԼ-ԴԷՄՕԿ. ՄԻՈՒԹԻՒՆ
ԲԷԼՕՌՈՒՍԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻՍՏ. ԳՐՕՄԱԴԱ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶԻՆԻՈՐՆԵՐԻՆ

Ցարերի երկրից հալածական երիտասարդութիւնը հպարտութեան յուզմունքով կարդաց հետևեալ լուրը, տպագրւած եւրոպական լրագիրների մէջ.

„Կովկասում դէպքերը լուրջ կերպարանք են ընդունում։ Շատ զինուորներ միացան ապստամբներին։ Տպաւորութիւնը անսովոր է“։

Երա՞զ է արդեօք այդ, թէ իրական մի դէպք, որ խոստանում է բաց անել ստրուկ երկրի պատմութեան մէջ նոր դարագլուխ, ազատութեան ցանկալի ուղին։

Ըմբոստներ շատ տեսանք։

Ըմբոստներ մտաւորական շրջանում, ուր գաղափարը, երկարամեայ պայքարից յետոյ, իր փայլուն յաղթանակը ունեցաւ։ Ըմբոստներ պրոլետարիատի խաւերում, ուր ազատութեան հրաւէրը, թէև ուշ, թէև դանդաղկոտ, արմատներ գցեց՝ կենսունակ շիթերով։ Ըմբոստներ „հալածւածների և նեղւածների“ այլևայլ շերտերում, նոյնիսկ այն շրջաններում, ուր երբեմն անդորրութիւնն ու անհոգութիւնը լաւագոյն իդէալն էր, միակ նպատակը աշխարհային վայելչութեան։

Բայց ըմբոստներ այն դասակարգի մէջ, որ ստեղծւած է բռնութեան ձեռքերով, նոյն այդ բռնութիւնը հովանաւորելու համար. յեղափոխութեան կողմնակիցներ կօրանոցների մէջ, որոնք ցարերի արևշատութեան անչէջ լապտերներն են միապետութեան լայնածաւալ տարածութեան վրայ. ապստամբութեան համակրողներ այն տարրի մէջ, որ ոչ միայն ի պաշտօնէ, այլ նոյնիսկ հոգով, սրտով և անունով մի գործ, մի նպատակ, մի տենչ միայն ունի՝ իր արիւնով ու անձով բռնապետութիւնը պաշտպանել, կուրծք տալ գահի և ցարի համար,—դա յուզիչ, սրտապնդող նորութիւն է, ընդունակ հոգեկան թրթիռ պատճառելու նոյնիսկ բացառիկ լաւատեսներին, մէկը այն լուրերից, որոնք գալիս են նոր հորիզոններ բանալու ազատարար կռուի աջողութեան համար...

Զ ո ր ա ն ո՜ց. — ազատութեան գերեզմանատունն է այդ, առասպելական այրը, որտեղից դարեր շարունակ փչում է մահաբեր քամին, կոչւած կիզելու ամէն մի

ծիլը, որ կեանք է բերում, որ հոգի և շունչ է տալիս։

Զինուորակա՞ն.—խաղաղութեան բացասումն է այդ, անէծքը հալալ աշխատանքի, որ մի կոչում միայն ունի — սպանել, մի զբաղմունք միայն — սպանել, մի իդեալ — սպանել։

Զինո՞ր.—ժողովրդի ծոցից դուրս եկած և թշնամի նոյն ժողովրդի. հայրենիքի պաշտպանութեան սպասաւոր՝ անունով, բայց նրան ջլատողը՝ գործով։ Դժբախտ՝ իբրև ստորադրեալ, դժբախտացնող՝ իբրև գործադիր։ Կարեկցութեան արժանի զօրանոցում և պատերազմի դաշտի վրայ, ատելութեան արժանի՝ քաղաքներում ու հրապարակների վրայ։ Թիկունք բռնապետութեան, թոյն՝ ազատութեան համար։

Որպիսի՜ ողբերգական վիճակ։

Բռնապետութեան այդ թիկունքը, որ հանդիսաւոր երդում է տալիս իր կեանքը զոհ բերել իշխանութեան և մեծաւորին, ժողովրդի անբաժան մասնիկն է, ծաղիկը ազգաբնակութեան, որին խլում են իր տանից, աշխատանքից, միջավայրից՝ ամբողջ հինգ տարի „զինուորական ծառայութեան“ մէջ տանջելու համար, յօգուտ ժողովրդական ամենամեծ թշնամու—միապետութեան, որ յենուած նոյն այդ զինուորների անձնուիրութեան և հաւատարմութեան վրայ՝ ծծում ու լափում է նրանց ստեղծագործող ուժը, նրանց կենդանութեան արմատը.

Ո՞վ չէ յիշում զինուորագրութեան աղեխարշ տեսարանները. — Ահա շինական երիտասարդները, խմբուած գիւղի առջև, որ սովորական վայրն է վերջին մնաս բարովի։ Որքա՜ն դառն արտասուքներ թափուեցին նախորդ գիշերները։ Պառաւ մայրը, որի միանձնարն է գնացողը, ջահիլ ամուսինը, որ ուրիշ ապաւէն ու օգնական չունի, յուսաբեկ ազգականներ, որոնց որդիքը վաղուց են գնացել նոյն ճամբով—բոլորն էլ սգաւոր՝ մնաս բարովի են եկել։ „Պիտի վերադառնա՞ն արդեօք“, մտմտում են ճամբայ դնողները ու արտասուքի մէջ խեղդում իրենց անծայր վիշտն ու բողոքը։ Եւ նորակոչները գնում են, բայց թէ ի՞նչ ճամբով, քանի՞ տարեայ համար—ոչ ոք գիտէ...

Տանում են նրանց, այդ „օրինաւորուած ստրուկներին“ տանջելու հիւսիսի անծանօթ, անսովոր վայրերում, կամ կոտորելու Մանջուրիական անապատներում, մի գործի համար, որ օտար է նրանց, մի գաղափարի համար, որ հերքումն է արդարութեան և մարդկայնութեան։

Եւ ի լրումն այդ կրկնակի տանջանքի—ահա գաղանային հրաման՝ կանգնել հմբերութիւնից եկած, յուսահատ ժողովրդական մասսաների դիմաց և հրացանի բռնել ըմբոստներին, որոնք հաց են ուզում, որովհետև ստամոքս ունին, ազատ շնչել են կամենում, որովհետև թոքեր ունին։

Զինուոր որդին — աշխատաւոր հօր դէմ։

Զինուած եղբայրը — անզէն քրոջ դէմ։

—

Զինուորնե՛ր։

Ահա այն անմիտ, աննպատակ դերը, որ ձեզ տանում է դէպի մարդասպան պատերազմի ահաւոր դաշտը, ահա այն ոճրագործ պաշտօնը, որ մղում է ձեզ դէպի հրապարակներն ու փողոցները։ Մի տեղ դուք խողխողում էք, միւս տեղը խողխողում։ Եւ վերջինը աւելի ամօթալի, քան առաջինը։

Մտածել, խորհել է՞ք դուք գէթ մի վայրկեան, մի բոպէ այն դժբախտ չարագործութեան մասին, որ ձեր պաշտօնն է, կամայ թէ ակամայ, և զգացել է՞ք արդեօք մի անգամ՝ ձեր հոգու հեռաւոր խորքերում, որ այդ օրինակ հնազանդ, անբողոք վարմունքով՝ դուք աջակից էք ծիրանաւոր ոճրագործներին, մասնակից բռնապետութեան ստեղծած ահ ու սարսափին, մահացու թշնամի ձեզ ծնող ժողովրդին, ձեր գիւղին ու գաւառին, ձեր շքթայակապ հայրենիքին։

Կովկասեան քաղաքներում ու գիւղերի մէջ, ժողովրդին հրացանի բռնողը դուք էք, զինուորնե՛ր։ Դուք էիք, որ յունուարի 9-ին, ինչպէս զինուած պատնէշ կանգ առիք „արդարութիւն“ գոչող անզէն ամբոխի դիմաց, Ձմերայրին պալատի առջև։ Դուք էիք, որ բաղմատանջ Լեհաստանի քաղաքներն ու շէնները արիւնով ներկեցիք, սրբազան արիւնով աշխատաւոր ամբոխի, որ չէ ուզում, կամ աւելի ճիշդ՝ չէ կարող ապրել քաղցով և հագնիլ մերկութեամբ։ Դուք էք, զինուորներ, որ հպարտ ձեր մարդասպան գործիքներով, պատրաստ էք կատաղաբար՝ ինչպէս գազան, և ապուշօրէն՝ ինչպէս ոչխարային հօտ, նետուիլ ձեր նմանների վրայ և դիակների մէջ որոնել ձեր քաջութիւնն ու պատիւը։ Սակայն դա պատիւ չէ, այլ նախատինք։ Դա քաջութիւն չէ, այլ ոճիր։

Ձեզ, դժբախտ ստրուկներ, երդուեցնում են հաւատարիմ լինել գահին և ցարին, որ երբեմն միամիտ եկեղեցու աչքում՝ արդարութեան և հայրական հոգածութեան մարմնացումն էր, — և այդ երդմամբ ամրապնդած՝ քշում են ձեզ դէպի եղբայրասպան գործեր։ Դուք երդուեցիք հնազանդ լինել ձեր սպաներին, հայրենիքի պաշտպանութեան գործում։ Ձեզ ստիպում են հնազանդ լինել և հայրենիքի աւերման մէջ։ Դուք երդում տուիք կուրծք տալ ժողովրդի թշնամուն. ձեզ հարկադրում են կուրծքը պատռել... Նոյն այդ ժողովրդի։ Երդուեցիք ծառայել հայրենիքին, բայց ոչ հայրենիքը ստրկացնողներին, գահին և ոչ աւազականոցին, գահակալներին, բայց ոչ ծիրանաւոր ապուշներին...

Դա երդում չէ, այլ յանցանք։

—

Կովկասեան զինուորնե՛ր։

Քաւել պէտք է այդ յանցանքը, որ սև է, ինչպէս խաւար, և մահաւէտ՝ ինչպէս թոյն։ Վայր դրէք այն հրացանը, որ ազատութեան չէ ծառայում, այլ ստրկութեան։ Քանդեցէք ձեր երդումը։ Ըմբոստացէք ցարի դէմ, որ

ամենամեծ երգմնալանցն է ժողովրդի և պատմութեան առջև. սպաների դէմ, որոնք անխղճօրէն եղբայրասպանութեան հրամաններ են արձակում. զինուորական կարգապահութեան դէմ, որ նախատինք է ձեզ համար, տանջանք՝ ժողովրդի գլխին։

Ըմբոստացէ՛ք, զինուորնե՛ր։

Բազմատանջ, հրացանի բռնած, արիւնաքամ ժողովրդի աղերսն է այդ, վերջին կտակը մարող շրթունքների։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒԻՒ

ԿՈՒԻՆԵՐ
ՍԱՍՆՈՅ ԵՒ ՄՇՈՅ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շարունակ. № 4-ի)

12. ՄԿՐԱԳՈՄԻ ԿՈՒԻՒԸ

Օր մը գիւղին կը մօտենան խումբ մը թիւրք զօրքեր։ Ռէսը անոնց դիմացը կ՚ելնէ իմանալու համար, թէ ի՞նչ նպատակով է իրենց այցելութիւնը։ Նպատա՞կ... մի խումբ թիւրք զօրք հայ գիւղ մը մտնէ, ի՞նչ հարկաւոր է նպատակը հարցնել, պէտք է ուտէ, խմէ, թալնէ, թափէ, ընտանիքի սրբութիւնը ոտնակոխ ընէ և անցնի գնայ։

Խումբէն կը բաժնուին քանի մը զօրք՝ գիւղը գնալու և իրիկուան քէֆի համար պատրաստութիւններ տեսնելու։ Ցանկարծ գիւղին մէջ հրացաններ կը պայթին և գնդակները կը թռչին դէպի մօտեցողները։ Թշնամին անմիջապէս դիրքեր կը բռնէ ու կըսկսի պատասխանել։ Խմբի ձիերը հրացաններու ձայնէն խրտչելով բոլորն ալ կը փախչին և գիւղը կը թափին։ Սմբատ կը վերցնէ ձիերէն երկուսը և երկու ընկերի տալով կ՚ուղարկէ կարս՝ կուի լուրը Մուրատին հաղորդելու։ Կռիւը կը տևէ մինչև իրիկուն։ Երևկոյեան հեռուէն կը նկատեն առաջացող մեծ բազմութիւն մը. երբ բազմութիւնը բանական կը մօտենայ, անոնց մէջէն որոշ կերպով կը լսի ձայներ՝ „կուեցէ՛ք տղերք, կուեցէ՛ք, հա՛ հասանք“։ Ատոնք պալաքցի քրդերն էին, որոնք հայերէն խօսելով կ՚ուզէին սխալեցնել մերոնք, իրենց օգնութեան եկողներ կարծել տալով և յանկարծակի կերպով պաշարելով։ Բայց շուտով կը պարզի անոնց կեղծիքը։ Տղայք կըսկսին անխնայ կրակ թափել մօտեցողներուն վրայ։ Միւս կողմէն ալ գիւղէն դուրս կուգայ տղաներէն մաս մը և դիրք կը բռնէ գիւղին շրջականները։ Երբ մութը բոլորովին կը կոխէ, գիւղի մէջ մնացողներն ալ դուրս կ՚ելնեն և բոլորը միասին կը հեռանան գիւղէն։ Խումբը կ՚որոշէ Ցունան գնալ, որովհետև յարմարութիւն չկար Մեղրագետի հարաւային ափը անցնելու, ուր աւելի ապահով կը լինէին։ Այդ դիտաւորութեամբ, երբ Ցունանի ճամբան բռնած ուղիղ արևմուտք կերթան՝ յանկարծ գետի ափին մօտ աղմուկ մը կը լսեն. դա նորշէնցի հայ մ՚էր, որ տոփով (լաստ) միւս ափը կ՚անցնէր իր արտերը աչքէ անցնելու։ Տղերք ձայն կուտան գիւղացուն, որ կուգայ և իր տոփը սիրով կը դնէ տղայոց տրամադրութեան տակ։ Քիչ վերջ խումբը դիմացի ափը կ՚անցնի և կը բռնէ Ալվառինճի ճամբան։

Մկրագոմի կուին մէջ թիւրքերէն կըսպանուին մէկ յիսնապետ և 11 զինուոր. իսկ մերոնցմէ ոչ մէկ կորուստ։

Այդ միևնոյն օրը Խասգեղի մօտերը կըսպաննուին զօրքերէն երեք հայ հօտաղներ, որոնց մարմինները ժողովուրդը կը վերցնէ կը դնէ եկեղեցին։ Պատահաբար այդ օրը գիւղը կուգայ անգլիական հիւպատոսը և անձամբ կը տեսնէ երեք անմեղ զոհերը։

13. ԴԷՐԸՔԻ (Աշտիշատ) ԵՒ ԿՈՒՐԱՎՈՒ ԿՈՒԻՆԵՐԸ

Դէրբքի մէջ կը գտնուէին հայ զինուորներէն 4 հոգի. քրդերը կ՚իմանան այդ և կ՚երթան գիւղացիներէն կը պահանջեն անպայման կերպով։ Մերոնք պարտաւորուած կը լինին կուելով դուրս քշել զանոնք գիւղէն։ Մութը կոխելուն երբ կը հեռանան, ճանապարհին կը հանդիպին Քեռիին, որ կուի ձայնն առած Կուրավուէն օգնութեան կուգար։ Հետևեալ օր քիւրդերը կը փորձեն երէկուան կուին վրէժը անցնել և անպաշտպան գիւղացիներէն լուծել, կը յարձակին գիւղին վրայ և կըսկսին թալնել. կըսպաննեն նաև 8 հայեր։

Քեռին նորէն կը վերադառնայ Կուրավու։ Բայց այնտեղ նկատելով, որ չի պիտի կրնայ ապահով լինիլ կառավարութեան և քիւրդերու հետապնդումներէն՝ գիւղացիների խնդրանքով իր համար կը փնտռէ մի ուրիշ աւելի յարմար տեղ։ Մուրատ գետի ափին սարքել կուտայ գետնափոր մը և հոն կը մնայ ժամանակ մը իր 6 ընկերների հետ. ո՛չ ոք չէր գիտեր Քեռիի նոր թաքստավայրի մասին՝ բացի գիւղէն հաց բերողէն։ Մի օր երբ դուրս գտնուած ընկերներէն մէկը կ՚ուզէ ներս մտնել՝ կը նկատի թիւրք զինուորներէ։ Թիւրքերը կուգան գետին ափը, ուր կ՚աշխատի եղեր իր արտին մէջ գիւղացի մը. այդ արտին բոլորովին մօտիկ մի տեղ դրուած կ՚ըլլայ ցաք, վեր կը վերցնեն այդ ցաքը և տակը կը տեսնեն գետնափոր մը։ Գետնափորի եզերքին զինուորներ կ՚երևին թէ չէ՝ ներսէն յանկարծ կ՚արձակուին միանգամէն եօթն հրացաններ. զօրքերը կը պաշարեն գետնափորի անցքը և կըսկսին գնդակներ տեղալ ներս։ Այնտեղ կըսպաննուի Քեռին իր 6 ընկերներով։ Թիւրքերը կը վերադառնան գիւղը, և կարծես սիրտ առած իրենց թափած արիւնէն՝ կըսկսին համարձակապէս ծեծել, հայհոյել և թալնել գիւղացիները, — խընզըր կեավուր, ֆէդայի սաքլաեա պիլի՞սիզ — խոզ հայե՛ր, ֆէդայի պահել կիմանա՞ք, ըսելով։

14. ՍԲԱՂԱՆԱՅ ԵՒ ԳՈՄԵՐԻ ԿՈՒԻՆԵՐԸ

Վահան երեք զինուորներով քաշուեր էր Սբաղանայ սար։ Անդրանիկ Նամակ կը գրէ Գէորգ Չաուշին, որ Վահանը վերցնէ և դաշտ բերէ։ Գէորգ Չաուշ կ՚ուղարկէ իրեններէ երկու հոգի Վահանը իր մօտ բերելու, որպէս զի միասին ուղևորուին դաշտ։ Տղերքը կըգան և Վահանին կը յանձնեն Գէորգ Չաուշի նամակը։ Վահանը կ՚որոշէ տեղ մը, ուր նամակաբերներ գիշերանց կրակ պէտք է վառէին, որպէս զի ինքը այդ նշանը տեսնելով գնար և անոնց միանար։ Նամակաբերներ կրակը կը վառեն, իրենց տրված հրահանգին համաձայն, բայց կրակը կը վառի ամբողջ գիշեր զուր տեղ, առաւօտեան մօտ միայն Վահան կը կարողանայ հասնիլ ժամադրավայրը, երբ արդէն լոյսը բացուած էր։ Դիմացի բլուրներէ

զօրքերը կը նկատեն զանոնք և կը հետևին. մերոնք պարտաւորուած կը լինին կռուել. բայց կռուի մէջ կ'իմնայ Վահանը. կըսպաննուի նաև ընկեր մը. մուսները վերցնելով զէնքերը և Վահանի պայուսակը կը փախչին։

Վահանի մահուան լուրը հասնելուն՝ Գէորգ Զաուշ ինքը մինակ կերթայ Անդրանիկի մօտ։ Կառավարութիւնը որ ամենախիստ կերպով կը հետևէր Անդրանիկի հետքը գտնելու համար, օր մը կ'իմանայ որ նա գոմեր կը գտնուի. անմիջապէս պաշարել կուտայ գիւղը քրդերով և զօրքերով։ Անդրանիկ կը դիմադրէ շատ յաջող կերպով. կռուի մէջ կըսպաննուին 7 քիւրդ և մի հայ։ Մութը կոխելուն կը քաշուի դէպի լեռ։

15. ՏԷՐՔԷՎԱՆՔԻ, ԱՐԱՂԻ ԵՒ ԲԵՐԴԱԿԻ ԿՈՒԻՆԵՐԸ

Կառավարութեան հետապնդումները տեղի պէտք է տային նորանոր կռիւներու։ Անգամ մը մերոնցմէ մի խումբ զինուորներ կը գտնուէին Տէրքէվանք. Թիւրքերը և քրդերը իմանալով այդ՝ կը պաշարեն գիւղը. նորէն կըսկսի կռիւ, նորէն կը վազէ արիւն։ Առաքելոց վանքէն, Բերդակէն և շրջականներէն կռուի տեղ կը թափուին զօրքեր ու քրդեր. մերոնք գիւղին մէջ բաւական կռուելէ վերջ՝ կը քաշուին Շարան քարեր, ուր կը շարունակուի հրացանաձգութիւնը։ Թշնամիներէն կըսպաննուին 14 հոգի։ Մեր տղայոց քաշուելէն վերջ, սակայն, սարսափելի կ'ըլլայ գիւղացիներու դրութիւնը. թրքական բարբարոսութիւնը անխնայ կերպով կ'աւերէ ամբողջ գիւղը, կըսպաննուին 33 հոգի, կը վիրաւորուին շատերը, իսկ գիւղացու կայքը ամբողջապէս կը թալանուի։ Հրացանաձգութեան ձայնէն Մուշէն կոտորածի տեղը կը հասնին ֆրանսական և անգլիական հիւպատոսները ու ականատես կը լինին կոտորածին ու թալանին, որոնք սակայն կը դադրին անմիջապէս։

Մի անգամ հայ զինուորներէն մի խումբ կ'իջնէ Արաղի մօտերը և գիւղ կ'ուղարկէ զինուորներէն մէկը՝ հաց բերելու. գիւղէն Թիւրքերը կը նկատեն հաց փոխադրողը և կը հետևին անոր մինչեւ խումբի իջած տեղը. տեղի կ'ունենայ փոքրիկ ընդհարում մը. մերոնք կը քաշուին դէպի Բերդակ. հրացանի ձայնէն Հաւատորիկի զօրքերը շուտով կռուի տեղը կը հասնին ու կը միանան Արաղի թիւրքերուն։ Բերդակի մօտ, երբ մերոնց կը հասնին, անյաջող ընդհարումէ մը յետոյ՝ գիւղը կը մտնեն և ինչ որ չեն կրցեր ընել ֆէդայիներուն, կ'ընեն խաղաղ գիւղացուն. դռները կոտրտելէն, շատերը լաւ մը ծեծելէն ու թալանելէն յետոյ կը մեկնին։

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԿԻԼԻԿԻԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Հալէպ, 4 մարտի 1905

— Ինչի՞ համար են եւրոպացոց ներկայացուցիչները Թիւրքիայում—հարցրեց մէկը ինձ անցեալ օր—և ինչո՞ւ համար է նստած ֆրանսիական փոխ-հիւպատոսը Մարաշում։ Երկար մտածեցի այդ հարցի մասին, բայց չկարողացայ մի որոշ պատասխան գտնել։

Գիտեմ որ շատ են տեսանելի և քօղարկուած վաճառականի հիւպատոսները։ Քիչ չեն նաև „հոգի որսողները" (ինչպէս այստեղ անուանում են միսիոնարներին), կամ նրանց հովանաւորողները։ Վերջապէս, ինչպէս և այլ ասպարէզներում, պակաս չեն և այնպիսի հիւպատոսներ, որոնք նայում են իրենց աթոռին՝ իբրև հանգստութեան յարմար տեղի. մի-մի անգամ քօղարկելով իրենց պարապութիւնը՝ թիթեռներ ժողուելով կամ ասորական փլատակները քրքրելով։ Բայց չէ՞ որ կան և այնպիսի հիւպատոսներ, որոնք գտնուում են իրենց կոչման բարձրութեան վրայ. չէ՞ որ նրանք հսկում են իրենց գտնուած վայրի խաղաղութեան և մասնաւորապէս քրիստոնեաների ապահովութեան և անդորրութեան վրայ։ Դժբախտաբար վերջին կէտը դժուար է ստուգել մեր շրջանի և մասնաւորապէս Մարաշի նկատմամբ։

Մարաշում, ինչպէս յայտնի է, ֆրանսիական փոխ-հիւպատոսութիւնը հաստատուած է հայկական կոտորածներից յետոյ։ 1895-96-ին սուլթանի զօրքի պարտութիւնից յետոյ, Թիւրք կառավարութեան և Զէյթունի հայերի մէջ հաշտութիւն կայացուեց Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների միջամտութեամբ ու միջնորդութեամբ։ Հետևաբար Մարաշում նստած եւրոպական միակ ներկայացուցչի, ֆրանսիական փոխ-հիւպատոսի վրայ, բացի ընդհանուր անդորրութեան հսկելու պարտականութիւնից, ընկնում է և մասնաւոր պարտականութիւն՝ հետևել, թէ գործադրւո՞ւմ են արդեօք պետութիւնների ստորագրած պայմանները Զէյթունի գայմագամութեան նկատմամբ։

Ահա ձեզ երկրում տիրող խաղաղութեան և ֆրանսիական փոխ հիւպատոսի հսկողութեան ու դերի վերաբերեալ մի քանի փաստեր։

1) Քրիստոնեայ գայմագամը, որ պետութիւնների միջնորդութեան շնորհիւ նշանակուեց աղքատ լեռնային Զէյթունի շրջանին, իբր թէ հանգստութիւն տալու համար, իրօք գոյութիւն չունի։ Նա չէզոքացուած է բոլորովին իր պաշտօնի մէջ և շրջանի բոլոր գործերը *de fecto* կատարում է զինուորական հրամանատարը... Այսպիսով թէ պետութիւնների խօսքն է յարգուած և թէ Թիւրքիայի շահը ապահովուած։ Երկու կողմերն էլ գոհ են. հարցնող չկայ միայն բուն ազգաբնակութեան գոհունակութեան մասին։

2) Հողազուրկ լեռնականները, մանաւանդ բուն Զէյթունցիները, որոնք դարերի ընթացքում պարապում էին ջորեպանութեամբ՝ այցելելով Հալէպ, Իսքէնտէրուն, Կեսարիա, Խարփութ, Փոքր-Ասիայի ամենահեռաւոր վայրերը—օրինական և ոչ օրինական խստութիւնների պատճառով անկարող են պարապել իրենց հին արհեստով և ենթակայ են աղքատութեան, հիւանդութիւնների, սովի։

3) Շրջակայ տասնեակ գիւղերի ազգաբնակութիւնը, որ այնքան տուժեց կոտորածների ժամանակ՝ կորցնելով աշխատողներին, զրկուելով տաւարից, ոչխարից, այծից, ոչ միայն օգնութիւն չստացաւ „գթասէր փատիշահից", այլև անցեալ տարւանից ենթարկուեց անասունների կրկնապատկած տուրքին։ Եւրոպական միջամտութիւնից յետոյ էր, որ շատ տներ լծկանը կորցնելով՝ քրիստոնեայ հողագործներից շատերը դիմած են վրանաբնակութեան, այսինքն *կիսավայրենացած* են։

4) Ինչպէս Փոքր-Ասիայի այլ վայրերում, այստեղ ևս թոյլ չի տրւում հայերին վերանորոգել թալանուած,

աւերուած դպրոցները, եկեղեցիներն ու աղօթատեղերը։ Կրօնական ծէսերը — որ նուիրական են մահմէտական լեռնականների համար — կատարւում են փլատակների տակ, ախոռների և այրերի մէջ, իսկ տեղ-տեղ չեն կատարւում բոլորովին...

5) 1895-ի յունուարի հաշտութեան պայմանով՝ Թիւրքիան վերահաստատում էր Զէյթունում անցեալում ունեցած զինուորների գունդը։ Ինչ ասել կուզէ, որ սուլթանի կառավարութիւնը օգտուեց պայմանի այդ կէտից և Զէյթուն ուղարկեց ոչ միայն 800 զինուոր, այլև 3 թնդանօթ։ Տարիներ անցան, երկիրը „խաղաղուեց“... և երեք ամիս առաջ Իսքէնտէրունից բերուեցին և Զէյթուն փոխադրուեցին եօթը զանազան տեսակի արագաձիգ թնդանօթներ, բազմաքանակ ռազմամթերքի հետ միասին։ Թէ ինչ զգացմունքներ էր զարթեցնում այս փոխադրութիւնը տաճիկների և հայերի մէջ — հեշտ է որոշել։ Ամենից շատ դողում էին մարաշցիքներանք, որոնք հազարից աւելի աշխատաւորներ զոհ տուին տասը տարի առաջ։

6) Մարաշում կան բանտարկեալներ, որոնց մէջ մի քանիսը „քաղաքական“, մինը ցմահ դատապարտուած՝ Եւրոպայում տպագրուած մի թերթ կարդալու համար, միւսը 15 տարուայ բանտարկութեան, մի երգարան կամ սաղմոսարան ունենալու համար ևն։ Լուսաւոր, ազատամիտ Ֆրանսիայի ներկայացուցիչը արդեօք մի անգամ այցելե՞ց բանտը, մի մխիթարական խօսք ասա՞ց „Մարսէյլէզ“ կարդալու համար բանտում փտողին։ Աւելին և. ամբողջ հինգ տարուայ ընթացքում Մարաշի բանտում հեծում էր մի բուլղարացի (Թիւրքերը հայ էին կարծել և 5 տարուայ բանտարկութեան որոշում տուել)։ Բանտարկեալը լուր տուեց իր մասին Եւրոպայի միակ ներկայացուցչին, պաղատելով նրա կառավարութեան միջամտութիւնը. Թիւրքերը իմացան այդ և գարշելի զնդանից բուլղարին փոխադրեցին մի աւելի վատ և մութ խուց։ Ֆրանսիայի ներկայացուցիչը տեսաւ այս և լռեց։ Նա լուր անգամ չտուեց բանտարկեալի մասին Պօլսոյ բուլղարական գործակալին։ Բուլղարը կրեց կամայականօրէն նշանակած պատիժը մինչև վերջ. իսկ հինգ տարուայ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ՝ ձեռքերը կապկապուած՝ էտապից էտապ ուղարկուեց դէպի Իսկէնտէրուն, թէ ուր, յայտնի չէ... Գերութեան մէջ ապրող ժողովուրդը ցաւեր ու դարդեր շատ ունի։ Թիւրք եաթաղանի տակ հեծող քրիստոնեաները հոգեկան սփոփանք կըզգային, գոնէ մի քանի րոպէ անվախ շունչ քաշելով՝ ճնշածների պաշտպան, հաւասարութեան և եղբայրութեան նշանաբանին հետևող Ֆրանսիայի ներկայացուցչի մօտ։ Բայց կարո՞ղ է արդեօք մէկը ազատօրէն մտնել այն բնակարանը, որի վրայ ծածանւում է երեքգոյնի դրօշակը։ Դեկտեմբերի սկիզբներին Զէյթունցիներից մէկը քաջութիւն թէ միամտութիւն է ունեցել այցելել Ֆրանսիայի փոխ-հիւպատոսին և... մինչև օրս հեծում է բանտում։

Այդ տեսակ փաստերի դիմաց, իրաւունք չունիմ միթէ հարցնելու, թէ ինչո՞ւ համար են հաստատուած Ֆրանսիայի հիւպատոսարանները Թիւրքիայում՝ անհատների քսակը լեցնելու, կրօնափոխութիւնը խրախուսելու, օգափոխութիւն անելո՞ւ, թէ՞ խաղաղութեան վրայ հսկելու, Ֆրանսիայի տուած խոստումները կատարելու և հանրապետութեան դրօշը բարձր պատուով պահելու համար։ Թող այս հարցերին պատասխանեն իրենք Ֆրանսիացիք։

ՎԱՆ, 18 մարտի

Սասունի և Մուշի աղէտներէն վերջ՝ Թիւրք կառավարութիւնը սովամահ կ'ուզէ անել Վասպուրականը իր բոլոր գաւառներով։ Սարսափելի սով է տարածուած Կարճկան, Կառկառ, Սպարկերտ և Կաւաշ գաւառներու մէջ։ Կառավարութիւնը անգութ կերպով պագիյէ կը հաւաքէ. ասիկա բաւական չէ, հարկաւաքները անլուր միջոցներով կաշառքներ կը վերցնեն գիւղացիներէն և կը խոշտանգեն, իսկ քիւրդ սէլէֆտարները, առիթէն օգտուած, միւս կողմէն կը տարածեն իրենց անգութ ճիրանները. կացութիւնը տխուր է և սրտաճմլիկ. գաւառներ հայ մուրացկաններով լեցուած են, որոնք ի զուր կը թափառեն չոր ցամաք հաց գտնելու։

—

Կ. ՊՕԼԻՍ, 10 ապրիլի

Սիւրիական Տրիպօլսի մէջ գտնուող հայ բանտարկեալներ.—ցմահ բանտարկուած են՝ 1) Գէորգ Փառչաճեան. սամաթիացի, ձերբակալուած 1897-ին, 2) Մուրատ Տէր Մինասեան, Պիթլիսի Տատկու Վանիկ գիւղացի, ձերբակալուած 1897-ին, 3) Խաչուկ Էլլուխեան, ռոտոսթօցի, ձերբակալուած 1897, 4) Ցարութիւն Պէյզատեան, իսկիւտարցի, ձերբակալուած 1898-ին, 5) Պետրոս Ցովսէփեան (ոչ յեղ.), սամաթիացի, ձերբակալուած 1897-ին և 6) Վռամշապուհ Սերոբեան, ասլանպէկցի (տասը տարով), ձերբակալուած 1901-ին։

Ասոնց վիճակի մասին առնուած տեղեկութիւնները շատ սրտաճմլիկ են. յաճախ դիմած են պատրիարքարան — ոչ մի պատասխան։ Բանտին խոնաւ և հակառողջական վիճակը աննկարագրելի է։ Իրենց պատիժէն աւելին ենթարկուած են. փոխանակ բերդարգելութեան՝ թիապարտի պատիժը կը կրեն։ Նիւթական կացութիւնին ողբալի է։

Աքիայի բանտի մէջ կան 8 քաղաքական բանտարկեալներ, որոնք նոյնպէս զուրկ են նիւթական միջոցներէ։ Ասոնց երեքը ցմահ բերդարգելութեան են դատապարտուած, երկուսը՝ մահուան, ուրիշ հոգի տասը տարուան բերդարգելութեան և մէկը ցմահ աքսորի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԲԱԳԻՒ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԻՇ. ՆԱԿԱՇԻՁԷԻՆ

(Թարգ. ռուսերէն ծեռագրից, տարածուած Ռուսաստանում)

Ամբողջ Ռուսաստանը, ամբողջ աշխարհը սարսափից երերուեց, իմանալով փետրուարի 6-9-ին Բագուում տեղի ունեցած անցքերը։

Ռուսաստանը փնտրում է և չէ կարող գտնել դժբախտութեան պատճառը։ Ով որ ճանաչում է նրա հեղինակին, պարտաւոր է ցոյց տալ բացարձակապէս։ Ապա թէ ոչ՝ նա ինքը կը դառնայ յանցաւորին թագցնող։ Ես ճանաչում եմ այդ յանցաւորին և սրբազան պարտք եմ համարում տալ նրա անունը։ Կոտորածի հեղինակը դուք էք։

Անհաւասիկ այն հիմքերը, որոնցով ես ամբաստանում եմ ձեզ և պատրաստ եմ ապացուցանել այդ ամբաստանութիւնը։

1. Բոլոր ոստիկանները, զինուորները, կօզակները՝ երբ նրանց խնդրում էին ազատել կոտորուողներին՝ միակերպ ու միաձայն պատասխանում էին՝ «մեզ չէ հրամայուած»։ Նրանցից մի քանիսը իրենց վրդովմունքն էին յայտնում, որ ստիպ-

ւած են անշարժ մնալ և զէնքը ձեռին դիտել, թէ ինչպէս չարդում էին անմեղներին։

2. Դուք և ձեր օգնական՝ ոստիկանապետ Դեմիցկի, կօզակների բազմաթիւ պահակով, շրջում՝ էիք ձիով քաղաքի մէջ և փոխանակ հալածելու կոտորողներին՝ դիտմամբ հեռանում էիք՝ կարծես շտապելով դէպի մի այլ տեղ, թոյլ տալու համար մարդասպանների ի կատար ածելու իրենց արիւնոտ գործը։ Մինչդեռ ապացուցած է, որ երկու կօզակների կամ հինգ զինուած հայերի երևալը բաւական է եղել՝ մարդասպանների փախցնելու համար։

3. Դուք յետ էիք մղում նրանց, որոնք դիմում էին ձեր օգնութեանը և երբ Ղալայէվն ու ուրիշները ձեր մերձենալում՝ բերկրութեամբ մտածում էին թէ ազատուած են՝ դուք դեռ նրանց վրայ էիք յարձակւում բացարձակ սուտ մեղադրանքով, որ իբր նրանք հրացան էին արձակում և դրանով հրաւիրում էին վրէժխնդրութիւն։

4. Դուք ձեր շքախմբով մօտենում էիք ջալոդներին, շտապով խօսում էիք նրանց հետ, իսկ երբեմն նոյնիսկ հրամայում էիք վերադարձնել նրանց իրենց զէնքերը, որ կօզակները սխալմամբ խլել էին։

5. Դուք հրաժարւում էիք տալ զինուորական իշխանութեանը գրաւոր առաջարկներ՝ զէնքի դիմելու համար և բաւականանում էիք բերանացի կարգադրութիւններով, իմանալով, որ ձեզ չպիտի հաւատային լոկ խօսքով։ Այդքանը բաւական է, որպէսզի համարել ձեզ ոչ միայն յանցանքի թոյլատրող, այլ և գործակից մարդասպանների. ի նկատի առնելով ձեր բարձր դիրքը Բագւում, դուք, կարելի է ասել, հոգին էք այդ անլուր ջարդի։ Կայէն, ի՞նչ արիր եղբայրներիդ հետ։

Բայց իբրև վախկոտ, դուք բոլոր ժամանակ ստում էիք, ձևանալով, որ իբր չունիք բաւականաչափ ուժ սարսափներին վերջ դնելու համար։ Դուք խաբում էիք հասարակութիւնը, ասելով որ իբր հրաման էք տուել՝ զէնք գործ դնելու. դուք մինչև անգամ երբեմն թափում էիք կոկորդիլոսի արտասուքներ։

Դուք զգւանք չզգացիք՝ փորձել խաբելու հասարակութիւնը, իբր թէ պաշտօնական խնդիրք էք ներկայացրել, որ հրապարակով քննեն խնդիրը հասարակութեան պատւիրակների ներկայութեամբ, լաւ իմանալով, որ այդպիսի դատաստանի իրաւունք դուք չէք ստանայ։

Ձեր գործակիցները, Դեմիցկի, Խոմիցկի, Բօրոդիկ, ձեզնից էլ լաւ են։ Նրանք խղճահարւում էին՝ ուղիղ նայել մարդկանց աչքերի մէջ, ոճրագործութիւնից յետոյ, ուր նրանք խաղացել են միայն երկրորդական դեր։ Նրանք հեռացան։ Դուք մնացիք Բագւում, դուք, գլխաւոր ոճրագործ։ Դուք մարդիկ էք ընդունում, խորհրդակցութիւններ էք հրաւիրում։

Դուք Կայէնից էլ վատ էք,—Կայէնը մէկ եղբայր սպանեց, իսկ դուք թաթախեցիք ձեր ձեռքերը հարիւրաւոր անմեղ եղբայրների արեան մէջ։ Կայէնը ինքն անձամբ սպանեց Աբէլին, իսկ դուք՝ օգտւելով ձեր հեղինակութիւնից, դէպի ոճիր մղեցիք շատ թշւառականների, որոնք երկար պիտի տանջւեն խղճի խայթոցներից։

Կայէնը սպանեց Աբէլին և չդիպաւ գալոց սերունդներին, իսկ դուք չանացիք բազմաթիւ սերունդների տապածութեան վրայ ցանել թշնամութեան սերմեր Բագւում ապրող բարեկամ ժողովուրդների միջև։ Եւ միայն առողջ դատողութիւնը կարող է քանդել ձեր գարշելի ծրագիրները։

Դուք Յուդայից էլ վատ էք, որովհետև Յուդան, զարհուրելի գործը նկատելուց յետոյ՝ զղջաց ու գնաց խեղդուեց. իսկ դուք հնարաւոր էք գտնում ապրել, ձեր բոլոր արածներից յետոյ։

Դուք անպատուեցիք հրաշագեղ Վրաստանը, որ ձեզ իբր զաւակն էր հաշարում։ Դուք անպատուեցիք Ռուսաստանը, որի դէմ կարող են տրտնջալ աղէտի զոհերը և անգիտակից ոճրագործները, կարծելով թէ ձեր և Ռուսաստանի մէջ կայ որևէ ընդհանուր բան։ Թող ձեր անունը լինի յաւիտեանս արհամարհած։

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՆՕՎԻԿՕՎ

(Բագւի նախկին քաղաքագլուխ)

ԴԷՊՔԻՑ ՅԵՏՈՅ

Բագու, 4 ապրիլի

Թիւրքերի առաջարկութեամբ Բագւի մէջ կազմուեց մի Թիւրք-Հայկական կոմիտէ, բուրժուա դասակարգից, որը բաղկացած պիտի լինէր 10 Թիւրքերից և 10 հայերից։

Կոմիտէի նպատակը պիտի լինի համերաշխութեան և խաղաղութեան գործին նպաստել։ Այդ մարմինը, որի գոյութեան մասին Թիւրքերը տեղեկացրել են նահանգապետին, հայ անդամների առաջարկութեամբ՝ յանձն է առել ազդեցութիւն գործ դնել պրիստաւ Մահմեդ-Բէկովի վրայ, որպէս զի նա իրեն մի փոքր „վայելուչ“ կերպով պահէ։ Կոմիտէի Թիւրք անդամները խոստացել են նաև ազդել Մահմեդ-Բէկովի վրայ, որ նա հեռանայ Բագւից, և ինչպէս երևում է, հնարաւորութիւն ունեն իրենց խոստումը կատարելու։

Հասարակութեան որոշ խաւերում պատրաստուեց մի խնդրագիր՝ ներկայացնելու Սէնատոր Կուզմինսկուն, որ նշանակուած է Բագւի աղէտների պատճառները քննելու և յանցաւորները գտնելու։ Խնդրատուները ուզում են, որ նախ քան քննութիւն սկսելը՝ ժամանակաւորապէս պաշտօնից հեռացնեն նահանգապետին և նրա ենթակայ բոլոր վարչական կամ ոստիկանական պաշտօնեաներին, քննութիւնը անկաշառ և առանց արտաքին ճնշումի կատարելու համար։ Թիւրք-Հայկական կոմիտէի հայ անդամները առաջարկել են Թիւրք անդամներին, որ այդ խնդրագրին Թիւրք տարրն էլ ստորագրի, բայց նրանք հրաժարւում են, իրանց գոյնը բոլորովին բաց անելով։ Ահա նրանց առարկութեան բովանդակութիւնը։ Մենք համաձայն ենք վկայել, որ ոստիկանութիւնը անգործ, անտարբեր գտնւեց կոտորածի ժամանակ, բայց համաձայն չենք լինի մեղադրել և դիտել, թէ ոստիկանութիւնն էր, որ Թիւրքերին նախապատրաստեց և գուցէ աջակցեց ու մասնակցեց կոտորածին, որովհետև այդ տեսակ մի մեղադրանք կը պահանջէ փաստեր, մասնաբոյց արուած անձնաւորութիւններ։ Մենք ոչ միայն համաձայն չենք լինի այդպիսի մեղադրանք անել, այլև կաշխատենք հակառակ գնալ և դիմադարձել հայերի մեղադրանքը“։ Ոչ մի Թիւրք հարուստ կամ ինտելիգենտ չստորագրեց յիշեալ խնդրագիրը։

Թիւրք գրգռիչները այնքան երես են առել տեղական կառավարութիւնից, որ իրանց յանդգնութեան ապշեցուցիչ փաստեր են տալիս. ահա դրանցից մի քանիսը նմուշի համար։ Մի Թիւրք գնում ու մի հայից պահանջում է հինգ հազար բուրլի, ասելով որ „դու պարտական ես“։ Հայը զարմանում է անծանօթ Թիւրքի այդ պահանջից և բնականաբար մերժում է, բայց սպառնալիքներ է ստանում։ Եւ Թիւրք-Հայկական կոմիտէի անդամներից մէկի միջամտութեամբ հայն վերջ է տրում պահանջին և սպառնալիքներին։—Այլ փաստ. Բալախանում Թիւրքերը նաւթային խողովակները օրցերեկով ջարդելով՝ նաւթ են գողանում։ Այդպիսի մի դէպք պատահում է և Մանթաշէվի նաւթահանքում։ Նրա ծառայողներից մէկը, Տէր-Մկրտչեան անունով, հանդիպում է նաւթագողերին. վէճ է սկսւում, երկու կողմից ատրճանակներ են արձակւում, առանց մինը կամ միւսը վիրաւորելու, և վերջիվերջոյ Թիւրքը տեղի տալով՝ հեռանում է։ Թիւրքի եղբայրը, որ բնակւում է

(Շարունակ. տես երես 76)

ԲԱԳԻՒ ԱՐԻՒՆՈՑ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ

ԴԻԱԿՆԵՐԻ ԿՈՑՏ



ԳԵՐԵԶՄԱՆՈՒՍԱՆԸ

բաղաքում, լսելով այդ դէպքի մասին, բաղաքից գնում է Բալախանի, որպէս զի սպանէ Տէր-Մկրտչեանին, բայց չէ յաջողում։ Տէր-Մկրտչեանը ինքնապաշտպանութիւն ցոյց տուող անձնաւորութիւն լինելով՝ Թիւրքերը սպառնալիքներով պահանջում են նրանից պաշտօնից հրաժարուել և հեռանալ. բայց նա սպառնալիքների դէմ սպառնալիքներ անելով, մինչև այսօր էլ չէ հեռանում։

Ուրիշ. փաստ։ Փիթօևի ֆիրմայի գլխաւոր ծառայողներից մէկի՝ Սարգիսբէգեանի մօտ՝ պրօկուրօրը հիւր է եղել։ Թիւրքերը կասկածելով, որ այդ պարոնը կոտորածի Թիւրք հեղինակներին մատնանիշ է արած՝ սպառնալիքով պահանջում են նրանից հրաժարուել պաշտօնից և Բագուից հեռանալ։ Նոյնը պահանջում են Փիթօևի քաղաքի գրասենեակից։ Սարգիսբէգեանը վախից խոստանում է և պատրաստւում մայիսին հեռանալ։ Բայց Տէր-Մկրտչեանի դէպքը առաջ գալով՝ նրա անվախութիւնը քաջալերում է առաջինին և յետաձգում է կատարել այդ խոստումը։ Այս դէպքն էլ արձագանք գտնելով, Թիւրք-Հայկական կոմիտէի Թիւրք անդամները խոստանում են բաւարարութիւն տալ և սպառնալիքների առաջն առնել։

Ոստիկանութիւնը մի „շայկա" է կազմել, իբր թէ քաղաքի հսկողութեան համար՝ գիշերները շրջելու։ Ոստիկանական խմբերը յարմար առիթը չեն փախցնում անցորդներին խուզարկելու, փողն ու ատրճանակը առնելու։ Խուզարկում են, փողն իւրացնում են և ատրճանակները ծախելով, նրանց գինն էլ դարձեալ իրենց գրպանն են դնում։

Մի շաբաթ է, որ այստեղ երկաթուղային ծառայողների, գլխաւորապէս արհեստաւորների, գործադուլ է։ Կովկասեան երկաթուղու գլխաւորը՝ Իվանովսկին՝ հեռագրել է հետևեալը. „Ոչ մի բաւարարութիւն չտալ գործադուլ անողներին"։ Անդրկովկասեան գլխաւոր գծերի վրայ հազիւ օրական մի մարդատար գնացք է շարժւում՝ այն էլ զինուորների հսկողութեան տակ։ Մեքենավարը զինուորների ճնշման տակ և միշտ զինուորներով շրջապատուած է աշխատում։ Բալախանի գնացքը երկու երեք օր նոյն կերպով և օրական մի կամ երկու գնացք դուրս բերելով՝ երթևեկեց, բայց այսօր երրորդ օրն է, որ բոլորովին դադարել է։ Ընդհանուր նահանգապետ Ամիլախվարին կայարանում մի մեծ յայտարարութիւն է կպցնել տուել, որով յայտարարում է թէ՝ ով որ մինչև ապրիլի 7-ը գործին չ'ներկայանայ, արձակուած կը համարուի և իբրև անյայտ պարապմունքի տէր՝ կ'ուղարկուի կայսրութեան այլ կողմեր։ Ասում են. թէ մտադրութիւն կայ Կասպեան նաւատորմի մեքենավարներին նշանակել երկաթուղային մեքենավարներ և նրանց միջոցով երկաթուղու երթևեկութիւնը ապահովել։ Գործադուլի հենց առաջին օրը սպանութեան փորձ կատարուեց՝ գործադուլի որոշման հակառակորդ կամ կառավարական ցանկութեան հետևել ցանկացող երկու արհեստաւորների դէմ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՕՐԳԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ

Orient անունով մի թերթ է հրատարակւում Բրիւսելի մէջ՝ նուիրուած ամբողջապէս Թիւրք կառավարութեան շահերի պաշտպանութեան։ Վարձկան խմբագիր, յոյն Նիկոլայիդէս ցցնում է նրա էջերը խանդավառ ու տաքակ ներբողներով՝ „Աբդիւլ Համիդ Խանի" հասցէին և դրա հետ միասին որոտում է շարունակ սուլթանականութեան ոխերիմ թշնամի՝ հայ ու մակեդոնական յեղափ խականների դէմ։ Անվերջ լուտանքներ են թափւում մանաւանդ մեր կազմակերպութեան վրայ, „Պրօ Արմէնիայի" և հայկական դատի եւրոպացի փաստաբանների վրայ։ Պրէսանսէներն ու դ'Էստուրնելները ստախօս ու անպատիւ զրպարտիչներ են, և նրանց հովանաւորեալ ապստամբները, ֆէդայիները—աւազակներ։

Պատահմամբ մեր ձեռքն ընկած սուլթանական այդ օրգանի մի համարում՝ գրեթէ ամբողջովին նուիրուած հայ շարժումներին, մենք գտնում ենք հետաքրքրական մտքեր ու տեղեկութիւններ՝ մասնաւորապէս Սասունի կռիւների ու պատրաստութիւնների մասին։

Բաւական օրիգինալ է այն փիլիսոփայական լուսաբանութիւնը, որ գիտուն խմբագիրը տալիս է Հայաստանի շարժումներին և նրանց ծագման։ Մարդկային ամէն արժանաւորութիւնից զուրկ՝ սուլթանի ստորաքարշ երկրպագուն՝ կուրծք է ծեծում և ա՜խ է քաշում Վոլտերի բերանով՝ որ „չնայած փիլիսոփայական շկօլանեռին"—որոնք անշուշտ ծաղկում են նաև Բօսֆորի ափերում—մարդիկ չար են, ապականած, ապերախտ, որ շահագիտական, ստոր կրքերն են ղեկավարում մարդկանց և այլն։

„Ինչո՞ւ զարմանալ, բայագանչում է նա, որ հայերը և պարարտ հող են ներկայացնում վատ ներշնչումների զարգացման համար... Միթէ՞ աշխարհը չգիտէ, որ նրանք առևտրականներ են, որքան ճարպիկ, այնքան և շահասէր, որ նրանց մէջ ագահութիւնը հիմնական առաքինութիւն է...

Եէ՞ որ հենց այդ տեսակ հողի վրայ է բողբոջում ապըստամբութեան ոգին, երբ այդ ապստամբութիւնը կարող է հնարաւորութիւն տալ իրագործելու նիւթական շահեր...

„1895-ի շարժումը առաջացաւ շահի, փաստակի այդ ախորժակներից. նրանք սրել էին արդէն դարերի ընթացքում, երբ Անատոլիայի ոչ-հայ ազգաբնակութիւնը շարունակ կեղեքւում էր հայերի ձեռքով,—բայց նրանք տակաւին չէին յագեցել։ 1904-ի շարժումը ծագեց միևնոյն պատճառներից և նրա դադարելուց յետոյ նորանոր շարժումներ պիտի առաջ գան, մինչև որ հայկական ախորժակները չուտանան լիակատար բաւարարութիւն"...

Հայ յեղափոխութեան պատճառները այդպէս լուսաբանող սուլթանական թէօրիտիկոսից դժուար է, իհարկէ, սպասել շատ թէ քիչ օրինաւոր տեսութիւն տեղի ունեցած անցքերի մասին։ Համարի մի ծայրից միւսը՝ ստեր ու ինսինուացիաներ։ Զայրոյթի թափեր, բուռն, ապարդիւն ճիգեր՝ վարկաբեկելու Սասնոյ հերոսներին, սրբապղծելու նրանց յիշատակը և հայ ազատագրական գործը։

Նսեմացուած է, իհարկէ, հայերի դիմադրութեան ուժը և դրա հետ միասին նուազեցրած կամ բոլորովին անտես են առնուած տաճիկ զօրքերը, որոնք ընկել են՝ Սասունի ապստամբութիւնը և երկրի ուրիշ բունկումները ճնշելու միջոցին։ Այդպէս, Շէնքի ճակատամարտում, Թիւրք պաշտօնական օրգանի վկայութեամբ, Թիւրքերի կողմից, եղել են ընդամենը 24 սպանուած և մի-միայն 25 վիրաւոր. սուտը աշկարայ է. վիրաւորների թիւը, հաւանական երևալու համար՝ գոնէ մի քիչ պիտի աւելի ցոյց տրուէր սպանուածների թիւից։

Իսկ թէ ինչ կորուստներ ունեցաւ տաճիկ զօրքը Կէլիէկուզանի տակ և թէ ինչ ուժերով էր սուլթանի

կառավարութիւնը արշաւել մի բուռն լեռնցիների դէմ,— այդ մասին ոչ մի խօսք Թիւրքաց օրգանում։ Եւ սակայն հէնց նոյն կառավարութեան ցուցմունքներից պարզ երևում է, որ տաճկական յաղթանակը շատ էլ աժան կերպով չէ վաստակւել, որ հայ „աւազակները“ Թշնամու վիթխարի ուժերի հանդէպ ցոյց են տուել հերոսական վճռականութիւն, որ կռիւը եղել է յամառ, արիւնահեղ։ Ահա թէ ինչպէս է նկարագրւած նրա մի դրւագը՝ Կէլիէկուզանի տակ. խօսողը Թիֆլիսի վալիի պաշտօնական տեղեկագիրն է.

„Սկսած ապրիլի 13-ից, երբ կառավարչական Ցանձնաժողովը ժամանել էր Շէնրը, մինչև 20-ը՝ ոչ մի նշան չեկաւ հաստատելու, թէ աւազակները անձնատուր լինելու կամ զէնքը տրամադրութիւն ունին... Արդէն ապարդիւն էր անցել բանակցութիւնը հայ երևելի Պօղոսի և Կէլիէկուզանի քահանաների միջոցով, որոնք վալիի յանձնարարութեամբ խաղաղացնելու դիմումներ էին արել. աւազակները յամառութեամբ հրաժարւել էին զէնքը վար դնել... Լուրեր էին գալիս՝ թէ նրանք օգտւել էին այդ 7 օրւայ զինադադարից՝ ամրացնելու Կէլիէկուզան տանող Կանիա-բաջի կիրճը, պաշտպանողական դիրք ստեղծելու համար և ուրիշ ամրութիւններ կառուցանելու լեռան այլևայլ կէտերում—մի բան, որ յետոյ մեր աչքով ստուգեցինք։

„Այդպիսի մի դրութեան հանդէպ՝ արշաւող զօրագունդը ստիպւած եղաւ ապրիլի 20-ի լուսաբացին ուղևորւել դէպի Կէլիէկուզան, գրաւելու համար՝ թէ այդ գիւղը և թէ կիրճն ու շրջակայ լեռները։ Հազիւ անցել էր 40-50 վայրկեան նրա մեկնելուց, երբ հայերը ամրացած պատնէշների ետևում՝ սկսեցին բուռն հրացանաձգութիւն որը բնաւ չընդհատւեց։ Կռիւը շարունակւեց հաստատ մինչև թիւրքական ժամը 5-ը։ Աւազակները յաջորդաբար դուրս մղւեցին իրենց դիրքերից, սակայն կռիւը վերջնականապէս դադարեց միայն գիշերամուտին, երբ զօրքերը գրաւեցին բարձրութիւններն ու իշխող դիրքերը և երբ նրանք քշեցին աւազակներին մինչև Կէլիէկուզան գիւղի շրջակայքը։

„Ընդհատւած գիշերւայ պատճառով՝ հրացանաձգութիւնը վերսկսւեց միւս օրը առաւօտեան։ Աւազակները բոլորովին ջարդւեցին ու ցրւեցին...

„Մայիսի 3-ին կայսերական զօրքը արշաւեց Տալւորիկի վրայ. միաժամանակ ուրիշ զօրքեր Խուլը գաւառից դիմեցին նոյնպէս դէպի Տալւորիկ“...

Թիւրքաց պաշտօնական աղբիւրը „մոռանում է“ յիշատակել Տափլկի դէպքերը, ընդհարումը լաճէկանցոց հետ (մարտի 31), արիւնահեղ կռիւները Շէնրից-Սէմալ (ապրիլի 13), ուր հայ ապստամբների արշաւանքի հանդէպ՝ զօրքերը սարսափահար փախուստ տուին դէպի ցած, թողնելով բազմաթիւ սպանւածներ և ուր միմիայն հայերի ձեռքով 34 թշնամու դիակներ նետւեցին Կէլիէկուզանի գետը։ Մոռացւած են Մերգերի կռիւները (ապրիլի 16), Մխիթարայ Խորի կռիւը (ապրիլի 18), Հատախի վանքի կռիւը (ապրիլի 22), ուր 19 քիւրդ ընկան բազմաթիւ վիրաւորների հետ, Կռիշիկի կռիւը (ապրիլի 30), ուր մօտ 150 ապստամբներ Անդրանիկի առաջնորդութեամբ, երկու ու կէս ժամ դիմադրեցին զօրքերին ու քրդերին, որոնց թիւը հասել էր այդ օրը իր գագաթնակէտին—մօտ 40,000-ի, քիւրդ աշիրէթների վկայութեամբ։

Այդպէս է գրւում պատմութիւնը Թիւրքաց պաշտօնեաների ձեռքով։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԷՖՕՐՄՆԵՐ

Մերձաւոր Արևելքում ևս գրութիւնը անհանգիստ է. խռովութիւններն օր աւուր սաստկանում ու ծաւալւում են Թիւրքաց կայսրութեան մէջ, և Աբդիւլ Համիդ իզուր է ձգնում ամրապնդել status quo-ն, օգտւելով համաշխարհային իրարանցումից։ Կնճռոտ խնդիրներին նորերն են աւելանում։ Արաբական Եմէնը ոտքի է կանգնել և արդէն փայլուն յաղթութիւններ է ծանուցանում աշխարհին։ Նա սպառնում է թօթափել համիդական խալիֆաթի լուծը, հիմնել մի նոր խալիֆաթ և նրա հովանիի տակ միացնել լայնարձակ Արաբստանի ըմբոստ ցեղերը։ Ապստամբների նշանախօսքն է՝ „Արաբստանը արաբներինն է և խալիֆաթը պատկանում է նոյնպէս արաբներին, որպէս Մահմէտի յետնորդներին“։ Եմէնի ապստամբութիւնը այդպիսով վերին աստիճանի ծանրակշիռ կերպարանք է ստանում և զարմանալի չէ, որ Սանա բերդի գրաւումը արաբների ձեռքով լուրջ սարսափ է ձգել Եըլդըզի վրայ։

Ոչ պակաս վտանգաւոր է Մակեդոնիայի վիճակը։ Թիւրքաց կառավարութիւնը մի մազաչափ անգամ չէ շեղւում իր ընթացքից—դիմադրել ռէֆօրմների գործին և միևնոյն ժամանակ գրգռել իրարու դէմ երկրի ազգաբնակութիւնները։ Նա բացարձակապէս թև է տալիս յոյն խմբերին, որոնք աւերում են բուլգար գիւղերը և գազանաբար ջարդում անմեղներին։ Նրանց ձեռքով գործած վերջին սարսափները ծայրէ ի ծայր ցնցել են ամբողջ Բուլգարիան և վրէժի ու ատելութեան կոչեր են լսւում Սոֆիայի ու այլ տեղերի բազմամարդ միտինգներում։ Այդ բոլորը ենթադրել է տալիս, որ մակեդոնական շարժումը կարող է մօտ ապագայում նոր թափով առաջ խաղալ և այն ժամանակ այլևս ցեղակից Բուլգարիան, որ շարունակ բռնւած է մօտալուտ պատերազմի տենդով, հազիւ թէ կարողանայ չէզոքութիւն պահպանել...

Եւրոպական միջամտութիւնը Մակեդոնիայի գործերում դեռ ևս սահմանափակւում է անուժ, տաղտկալի առաջադրութիւններով ու յիշատակագիրներով. աւստրօ-ռուսական համաձայնութիւնը, որ իր ձեռքն էր առել խնդրի լուծումը, իրօք անդամալուծւած է, շնորհիւ Ռուսաստանում ու հեռու Արևելքում ստեղծւած ճգնաժամի։ Միւս արևմտեան պետութիւնների և գլխաւորապէս Անգլիայի միջամտութիւնը անհրաժեշտ է դիտւում՝ արևելեան տագնապին նպաստաւոր ընթացք տալու և աւստրիական յաւակնութիւնները Բալկաններում սանձահարելու համար։ Հաւաքական այդ միջամտութեան հարցը եռանդով արծարծւում է եւրոպական մամուլի ու դիւանատների մէջ. նա արդէն հասունացել է, և կարելի է յոյս տածել, որ շուտով կը գործադրւի Տաճկաստանում առկախ մնացած բոլոր խնդիրների նկատմամբ։

Ենթադրւում է, որ նորերս Վենետիկում կայացած՝ աւստրիական և իտալական արտաքին գործերի մինիստրների խորհրդակցութեան մէջ ևս դրւել է, ի միջի այլ կարևոր հարցերի, այդ հաւաքական միջամտութեան հարցը։ Տիտոնի, իտալական մինիստրը, իբր թէ պնդել է Գոլուխովսկու առաջ, որ անհրաժեշտ է ռեֆօրմների գործը արագացնելու համար՝ տարածել բոլոր եւրոպական պետութիւնների վրայ այն լիազօրութիւնը, որ մինչև օրս տրւած էր միմիայն Աւստրիային և Ռուսաստանին։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՑՊԱՀՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

(Թղթակցութիւն)

Այս տարուայ յունուարին Պետերբուրգում և Ռուսաստանի այլ վայրերում տեղի ունեցած դէպքերը ամբողջ աշխարհի ուշադրութիւնը սևեռեցին Ռուսաստանի վրայ. կապիտալի և քաղաքական բռնութեան տակ հեծող ժողովուրդները տանեակ տարիներով փայփայած իրենց յոյսերի իրագործման և ակնկալած փոփոխութիւնների արշալոյսն էին տեսնում դրա մէջ։

Մի այսպիսի հետաքրքիր վայրկեանում՝ ապրել Ռուսաստանում, մոտիկից դիտել, թէ ինչպէս՝ ոչ թէ ամիսներով, այլ օրերով, ժամերով է աճում ընդդիմադիր ուժը, ինչպիսի հմայք է ձեռք բերում յեղափոխական շարժումը, թէ ինչպէս հրապարակով, աչկարա պատրաստութիւններ են տեսնում վերջնականապէս խորտակելու բռնութեան սիւնը և լոյսի ու ազատութեան դրօշակը ծածանեցնելու խաւարի և բռնակալութեան թագաւորութեան վրայ, այո՛, մի այսպիսի ժամանակ հաճոյք է այնտեղ լինելը։

Յեղափոխական սոցիալիստական բոլոր կուսակցութիւնների համար գործի ընդարձակ ասպարէզ բացւեց։ Էլ ժամանակ չէր թէորիական երկրորդական խնդիրներով զբաղւելու, կեանքը ինքը կատարել էր թէորիայի դերը։ Այժմ՝ գործ է հարկաւոր, կենդանի գործ։ Պէտք էր կրակին կրակով պատասխանել, սպանութեան՝ սպանութեամբ։ Զէ՞նք, աղաղակեց բանւորական մասսան, զէնք տուէք մեզ, մենք այդ մարդասպաններին պատժելու եղանակը գիտենք։ Բայց զէնք չկար։ Քաղաքական կուսակցութիւնները, մանաւանդ սոցիալ-դէմոկրատական կուսակցութիւնը այդ մասին չէր մտածել և նոր միայն հասկացաւ, թէ անընդունակ է եղել շարժման գարկերակին հետևելու. ձեռքից բաց թողած՝ անուշադրութեան էր մատնել օրգանիզմի իրական վիճակը և փոխանակ պատրաստ լինելու վճռական պահանջի դէպքում վճռական միջոցներ հայթայթելու, զբաղւած էր այն խնդրով՝ „մեծամասնութի՞ւն“ է արդեօք Մարքսի թէորիաներին հաւատարիմ գործում, թէ՞ „փոքրամասնութիւնը“...

Ցաւալի է սոցիալ-դէմոկրատ կուսակցութեան ներքին պառակտումը։ Տարիների ընթացքում սնուցանելով իր մէջ անհաշտ ատելութիւն դէպի այն բոլոր տարրերը, որոնք իրենց հետ միասին նոյն հիմնական սկզբունքները դաւանելով հանդերձ՝ համարձակութիւն ունէին քննադատաբար վերաբերւելու այլ և այլ դոգմաներին, այժմ նրա պառակտուած հատուածները սկսել են նոյն անհամբերող ոգին արծածել իրար դէմ։ Ո՞ւր էր թէ պառակտումը սահմանափակւէր միայն մտաւորական շրջաններով, իսկ գործը մնար մէկ և համերաշխ։ Այժմ պառակտումը մտաւորական շրջաններից անցել է բանւորական մասսաներին, որտեղ ի հարկէ ստանում է բաւական կոշտ արտայայտութիւն։ Շատերը յոյս ունեն, որ մօտ ապագայում հաշտութիւն կը կայանայ պառակտուածների մէջ, որ մէկնումէկը վերջնականապէս կը յաղթէ, հաւանօրէն՝ „մեծամասնութիւնը“, որի կողմն է նաև իրական մեծամասնութիւնը՝ թէ մասսաներում և թէ մտաւորական շրջաններում։ Կարող ենք թերևս յուսալ, որ վճռական բոպէին այդ պառակտիչ ձայները կը լռեն, և ուժը ամբողջապէս կուղղւի ընդհանուր թշնամու՝ միապետութեան դէմ...

Կառավարութեան վճիռը՝ ոչինչ չզիջել միապետութեան իրաւունքներից և այդ ուղղութեամբ ձեռք առած խիստ միջոցները ընդդիմադիր տարրերի դէմ, վերջիններիս բերին այն եզրակացութեան, որ խաղաղ ճանապարհով ոևէ հետևանքի հասնելը միամիտ երազ է, և բուն յեղափոխական տաքտիկը դարձաւ պահանջ բոլոր դժգոհների համար։ Զէնք կոչելը դարձել է նշանաբան բոլորի բերանում, զինւում են բոլորը, ով միապետութեան կործանումով շահագրգռւած է. զինւում են դանակով, սրով, ատրճանակով, որսորդական և զինւորական հրացաններով, ռումբով,—ամէն բան ձեռք է բերւում ագահութեամբ։ Դա ոչ օրի համար գաղտնիք չէ։ Յեղափոխական մարմինները զբաղւած են ժողովրդին զինելու հոգսով. և չի գտնւի դարձեալ մի միամիտ, որ այսուհետև ցոյցի գնայ ձեռափայտով զինւած։ Առաջիկայ ցոյցերը անպատճառ զինւած կը լինեն և սոսկալի. արիւնը կը հոսի ջրի պէս, և դա չի լինի միայն անզէն ժողովրդի արիւնը...

Շատ մեծ յոյսեր կան նոր սկսւած գիւղացիական շարժման վրայ։ Գիւղացին կորցրեց իր աշխատաւոր ձեռքերը Մանջուրիայի դաշտերում. ծանր հարկերի տակ սպառւել է նրա նիւթական ուժը։ Երբ գարնան, ցանքերի ժամանակ, ոչ սերմացու կունենայ և ոչ դրամ՝ այդ գնելու, ոչ աշխատաւոր ձեռքեր, որ քաղաքում աշխատելով գոնէ իր ընտանիքը պահէ—մինչդեռ գիւղում ապրող կալւածատիրոջ ամբարները պատռւում են ցորենի շատութիւնից — սոցիալական յեղափոխական ոգին նրան կը բռնկէ և տեղի կ՝ունենայ այն, ինչ որ ներկայումս արդէն սկսւել է մի քանի նահանգներում։ Իսկ զօրքը, բռակալութեան այդ կոյր գործի՞քը։ Պիտի ասել, որ նա էլ անզգուշութեան չէ մատնւած. նա էլ սկսում է տարտամ կերպով գլխի ընկնել որ ինչ որ անիրաւ բան է կատարւում, որին ինքը գործիք է դարձել։ Այժմ նրա մէջ էլ առաջացել են տարրեր, որոնք նախկին անտարբերութիւնը մի կողմը թողած՝ յեղափոխական գրքոյկները հաճոյքով ստանում են և տանում ընկերների հետ կարդալու։ Դա մի ցանկալի խմորումն է, որ սկսւած է...

Զբպէտք է մոռանալ և ուսանողութեան կատարած դերը։ Ժամանակակից Ռուսաստանի այդ աւելի զգայուն, քան գիտակցող, բայց իր պահանջների գիտակցութիւնից ոչ զուրկ, երիտասարդական ոգևորութեամբ խանդավառւած տարրը միշտ եղել է շարժման առաջապահը։ Նա հալածւել է ամբոխից, գանակոծութեան է ենթարկւել՝ այն ժողովրդից, որի շահերի պաշտպանութեան նա նւիրել է իրեն, բայց չէ վհատւել, միշտ կանգնած է մնացել իր կոչման բարձրութեան վրայ։ Ներկայումս Պետերբուրգի համալսարանի ուսանողների նախաձեռնութեամբ բոլոր բարձրագոյն դպրոցներում՝ համարեա նոյնութեամբ ընդունւած է վճիռ՝ դադարեցնել պարապմունքները և պահանջել կառավարութիւնից, որ վերջ տրւի պատերազմին, ընդհանուր, հաւասար, գաղտնի և ուղղակի ընտրողական սկզբունքի հիման վրայ հրաւիրւի հիմնադրական ժողով, կատարւի ամենատարրական բարենորոգութիւնները, անձի, խղճի, բնակարանի, հաւաքումների և խօսքի ազատու-

թիւն ապահովելով։ Ուսանողութեան այս վճիռը, հաստատուած ստորագրութիւններով և իրար պաշտպանելու պարտաւորութեամբ՝ միշտ լարուած վիճակի մէջ է պահում հասարակութիւնը։ Մի քանի անցած փորձերից յետոյ, բարձրագոյն դպրոցների վարչութիւնը կորցրեց իր յոյսը պարապմունքները շարունակելու վերաբերմամբ և սպասում են սեպտեմբերին, երբ գուցէ հնարաւորութիւն լինի վերսկսել։ Այժմ ուսանողները ցրւում են գաւառները, իրենց տները։ Թէ մտքերի ինչ յուզում պիտի առաջ բերի նրանց ներկայութիւնը պետութեան ամենախուլ անկիւններում անգամ, պարզ է ինքնըստինքեան։ Ուրախալի է աւելացնել, որ ուսանողութիւնը համերաշխ գործունէութեան ևս առաջին օրինակն է տալիս։ Տարբեր կուսակցութիւնների պատկանող ուսանողներից կազմուած, „հաւաքական խորհուրդ“ մարմինն էր, որ կազմակերպեց համալսարանական ուսանողների ժողովը և տոն տուեց բարձրագոյն դպրոցների շարժման։

Ցայտնի է, որ համալսարանական ուսանողների համախմբման ժամանակ սկզբում սև, ապա կարմիր դրօշակներ բարձրացնելուց յետոյ՝ ուսանողութիւնը պատռեց կայսեր պատկերը։ Այս առիթով համալսարանական վարչութիւնը բարձրագոյն նկատողութիւն ստացաւ, և այժմ լուրեր են պտտում, որ որոշուած է համալսարանի բոլոր ուսանողներին արձակել, երևի սովորական կօմեդիան կրկնելու համար, վերընդունել արձակուածներին նոր դիմումներով։ Աշակերտական ցոյցերը օրեցօր բազմանում են և կտրուկ ձև ստանում։

Եթէ սրանց վրայ աւելացնենք և այն դժգոհ վիճակը, որ իշխում է ոչ-յեղափոխական, ընդդիմադիր շրջաններում, պատկերը ամբողջացուած կը լինի։ Չենք խօսում պատերազմի մասին, որ իր սոսկալի հարուածներով անդրադառնում է հասարակութեան բոլոր խաւերի տրամադրութեան վրայ։ Շնորհիւ այս բոլորի՝ այսօր Ռուսաստանը բռնկուող նիւթերի մի շեղջակոյտ է ներկայացնում, որ ամեն րոպէ կարող է պայթել։ Թէ ո՞ր տեղից և ի՞նչ առիթից կըսկսի հրդեհը, յայտնի չէ։ Բայց որ դա կը լինի մօտիկ ապագայում և հիմնովին տակնուվրայ կանի Ռուսաստանի պետական և ընկերական կազմը, ցնծութեան աղաղակներ կը խլի տանջուած մարդկութեան կրծքից—դա անտարակուսելի է։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

* * *

„Դրօշակ“-ի խմբագրութիւնը մայիսի 10-ին ուղարկեց եւրոպական գլխաւոր լրագիրներին հետևեալ հեռագիրը.

„Կ. Պօլսից ստացած տեղեկութիւններին նայելով, թիւրքաց կառավարութիւնը, հայ յեղափոխական խմբերի ներս խուժելը արգիլելու պատրուակով՝ Բայազէդի սանջակն ուղարկեց երեք վաշտ հետևակ և երկու խումբ հեծելազօրք։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը յայտարարում է, որ ներկայումս յեղափոխական խմբեր չկան Կովկաս-թիւրքական սահմանագլխի վրայ, և որ սուլթանական գործակալների տարածած լուրերը ուրիշ նպատակ չունեն, բայց եթէ արդարացնել այն հալածանքներն ու նոյնիսկ կոտորածները, որ թիւրքաց կառավարութիւնը ուզում է կազմակերպել Վանի վիլայէթում“։

*

Բագուից ստացուած նամակներից քաղում ենք հետևեալը.

„Չնայելով որ զինուորական դրութիւն է տիրում և սեռատական քննութիւն է սկսուած՝ կոտորածների իսկական հեղինակներին պատժելու համար, չնայելով նոյնպէս, որ կովկասեան նոր փոխարքան բաւական բարեմիտ յայտարարութիւններ է անում իրեն ներկայացող պատգամաւորներին, այնուամենայնիւ կովկասեան կառավարութիւնը ամէն տեղ շարունակում է գործել իր նախկին սիստէմով։ Ամէն օր ոստիկանական գործակալները քաղաքում հաղար ու մի ստեր են տարածում՝ հայը ռուսի, ռուսը հայի ու հրէայի, ռուսը և թիւրքը հայի ու հրէայի դէմ զրգռող. նոյնիսկ թռուցիկներ են բաց թողնում։ Այդ ուղղութիւնը այնպիսի զրգռուած գրութիւն է ստեղծել, որ ժողովուրդը „լուն ուղղ է շինում“ և ամէն մի աննշան դէպքից տարուած տակնուվրայ լինում, խանութներ փակում ու տներում ապաստանում։ Շրջակայ գաւառներից էլ շարունակ նոյն լուրերն են ըստացուում։ Նուիրի բոպէ առ բոպէ սպասում են կոտորածի. այնտեղից ստացած տեղեկութեան նայելով՝ եթէ մինչև այսօր կոտորածը չեռաձգուել է, այդ շնորհիւ այնտեղ գտնուող ռուսների թիւրքերի, որոնք ուզում են առայժմ չեռաձգել կոտորածը՝ չենք իմանում ինչ պատճառով, և որպէս զի այդ չեռաձգումը տեղի չունենայ, շիաները որոշում են մի ռուսի սպանել ու դիակը հայերի տան առաջը գցել ու այդպիսով ստիպել ռուսներին իրենց հետ անմիջապէս միանալու և կոտորածը յաջողցնելու։ Դրանց զրգռում և քաջալերում են նաև տեղական մի քանի ռուս չինովնիկներ — ինժեներ Պելցով, կազնաչէյ Դրուժինին, ուսուցիչ Ուստուրկաուրի։ Սրանց անունները յայտնի են գաւառապետին, բայց իհարկէ վերջինը տրամադիր չէ մի քայլ անելու“...

*

Բագուի Ներգամիտ ոստիկանութիւնը, խաղալիք ոճրագործ Նակաշիձէի, շարունակում է իր դաւերը, հայ-թիւրքական նոր դէպքեր ստեղծելու նպատակով։ Ներքեւ բերուած վկայագիրը, գրուած իբրեւ թէ թիւրքերի կողմից, դրա մի նոր ապացոյցն է։ Ահա նրա հարազատ թարգմանութիւնը։

Հայեր, մեր թանկագին հայրենիքի քաղաքացիներ,

Դիմում ենք ձեզ և խնդրում, ի սէր Քրիստոսի, հանգըստացէք, ուշքի եկէք, հեռատես եղէք, յիշեցէք ապագայ դժբախտութիւնները՝ այն դէպքում, եթէ շարունակեն ձեր անցեալի արարքները։ Յարձակում մի գործեք ոստիկանների և մեր թիւրքերի պարագլուխների վրայ։ Խղճացէք անպաշտպան ծերերին, կանանց և երեխաներին, որոնք ձեր ստոր ձգտումների զոհ պիտի դառնան։ Եթէ դուք յարձակէք մեր թիւրքերից ոևէ մէկի վրայ, ինչպէս դուք այդ արեցիք այս օրերս, այն ժամանակ, — երդւում ենք Աստուծով — բոլոր հայերը կոտորածի կ՝ենթարկուեն։ Վերջ տուէք ձեր ազգայնա-դէմոկրատական շարժումներին, հանգիստ թողէք և ոստիկանութիւնը և մեզ՝ թիւրքերիս։ Այնուամենայնիւ մենք հաւատացած ենք, որ ձեր մէջ կը գտնուեն բարեմիտներ, որոնք գիտակցում են այն, ինչ մեզանից պահանջում է, այս օրինակ պարագաներում, մեր արքազան կրօնը։

ԲԱԳՈՒԻ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆԵՐ

1905, մարտի 25
Բագու

*

„Մարտի 1-ին Թիֆլիսում գումարուած աշակերտական ժողովը, քննութեան ենթարկելով դպրոցական կեանքի անբնական ընթացքը Ռուսաստանի և մասնաւորապէս Կովկասի մէջ, իմիջի այլոց հետևեալ որոշումներն ընդունեց. 1) Ընդհանուր, պարտաւորիչ և ձրի սկզբնական ուսում, 2) „Քաղաքականութեան“ հալածում դպրոցից, քանի որ ուսումնարանը պիտի նկատւի իբրև գիտութեան տաճար և ոչ թէ կառավարչական մարզարան, 3) Ուսում մայրենի լեզուով, 4) Ուսուցիչների և տեսուչների ընտրական սիստէմ (հատակութիւնից) 5) Վերացում այն հսկողութեան, որ կատարւում է աշակերտների վրայ՝ դպրոցներից դուրս, 6) Ազատութիւն ընկերական կազմակերպութիւնների, 7) Ընկերական դատարան և 8) Աշակերտների անձի անձեռնմխելիութիւն։ Այդ առիթով հրատարակուած շրջաբերականը վերջանում է այս խօսքերով. „Ամրապնդուած մեր ձգտումներով՝ մենք ստոր այս խօսքերով. „Ամրապնդուած մեր ձգտումներով՝ մենք կը դնենք կեանքի փշոտ ճանապարհի վրայ և կուով ձեռք կը բերենք իրաւունք՝ ուսանել ազատ դպրոցում, ազատ երկրի մէջ“։*

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Հանգուցեալ Հ.- ի նպաստ Դաշնակցութեան կտակած 500 ֆր.:
Ռուսաստան.— Դրամ կոմիտէին 21,500 ֆրանք:
Կրէտէ.—Կանդիայէն՝ Գ. Ա. 20 ֆրանք:
Գումար 22,020 ֆրանք:

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ III (Հրայր) կոմիտէն՝

1904 թ. մայիսի 15-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը.—

Խմբերից՝ Հերսելիա 438. 50 ռուբլի, Հուր 205, Ցորդանան ա. եւ բ. 190. 30, Զուլարան բ. (Կայծակ ա.) 103. 95, Ղարիբ ա. եւ բ. 108. 90, Հայրենասէր 99. 99, Արամազդ 86, Զուլպան ա. 82. 70, Մատեան 66. 55, Անի 63. 90, Հրաբուղխ ա. եւ բ. 56. 60, Վազգէն 52. 50, Սեւիկ 41, Նոր սերունդ 40. 90, Օնէ 38. 10, Ընտիր Հայկազունք 36. 50, Մուրճ 36. 45, Ձեւիշ 34. 80, Մասիս 34. 32, Նպատ 34. 20, Վասպուրական 32. 70, Նոր քայլ 30, Անդրանիկ բ. 30, Արեան ձոր 26, Թուման 25, Ռշտունի 23, Դսորբին 22. 80, Վեցդարեան 22. 30, Ալազազ 20. 90, Գողթան 16, Տանջանք 17, Աշոտ 16, Որոտ 15, Անդրանիկ ա. 11. 15, Թռչող 10. 75, Արեան դաշտ 10, Թառթառ 9. 50, Արծիւ 8, Բերդ 8, Նեփրեմի խումբ 6, Սիւնիք 5. 40, Կայծակ բ. 4 ռուբլի: Նէրներ՝ Նոր. Զ-ից 80, Դ. Զ-ից 16, Խ. Զ-ից 12, Պ. Սարգսի մինչոց. 10. 70, Հայկից 10, Հայկազունու մինչոց. 8. 50, Արծուիկի մինչոց. 5, Զ. Տ. Մ-ից 5, Նիկողոսից 5, Արզումանից 5, Ս. Մ-ից 2, Լոռեցի Մկրտչից 2, Յովհաննէսից (տուգանք) 100, Գէօթէի գրքերի վաճառումից 7. 50, Հիայր կոմիտէի 2 երեկոյթից 651. 95, Նոր-կեանք ենթակոմիտ. երեկոյթ. 107. 93, Խենթի երեկոյթ. 67, Ն. Ն. երեկոյթ. 24. 75, Մահ կամ ազատութիւն խ. ներկայացումից 59. 27, Նոր սերունդ խ. 124. 53, Աշոտ-երկաթ խ. 63. 18 ռուբլի: Գումար 3587 ռուբլի 97 կոպէկ:

ՆԱԽԱՀԱՆԳՍՏԻ *կեդր. կոմիտէն՝*

Տեղական կոմիտէն՝ 1904 թ. դեկտեմբեր ամսին.—

Հետեւեալ խմբերից՝ Դաւիթ-բէգ 5. 50 ռուբլի, Լոյս 15, Կատարեալ 15, Նեփրովթ 91, Հայկազեան 8. 10, Մուշեղ 22, Լուսաբեր 33. 90, Յոյս 53, Մտրակ 24, Նեփրատ 9, Արշալոյս 57, Ազրայիլ 48. 90, Արմատ III ճ. 29. 60, Վառուած տարօնացի 32, Բագրատունեան տապան 15, Դերձակի Կամսարականից 18, Աղասիից 18, Կարօյից 6, Շ. Շահումի 51. 15, Արշաւիրի Վարդանից 1, Ցարութիւն Ազիզեանից 3, Նեփրովթ 12, Շանթի Զեփիւռից 1, Մուշեղ 7. 50, Ազրայիլի Գաբրիէլից 3, Մովսէսից 3, Արմատ III ճ. Նորակազմ ծիւղ 5, Բայազ-աղբիւր 5, Վառուած տարօնացի 10, Ռուիծի բաղդասարից 2, Խաչիկից 2, Կարապետից 2, Օհանից 2, Շ. Շահումի մինչոցով Յակոբ Օհանեանից 53, Ռուիծի Յովհաննէսից 1. 50, Իշխատիրոսից Ռէյսի միջ. 2 հատ դրագունի նոր հրացան Բէրդիանկա: Զրաշէնի խմբերից՝ Գրգուր 53 ռուբլի, Խամուր 43. 50, Ղարիպ 28, Ազնիւ Տարօնացի 4, Գեղարդ 17, Աւետարան 7, Թուխ Մանուկ 5, Վիշապ 21, Յարդ 0. 80, Վիշապ 28, Գրգուր 52, Ղարիպ 54, Աւետարան 23, Ծովախորշի Բողբոջ 10, Իշխան Զր. 7, Տիխորիցկու Մխիթարի մինչոց. 10. 35, Արշաւիրի Վանդից տուգանք 3, Ռուիծի Ստեփանից 1 ռ.: Գումար 1032 ռ. 80 կ. 2 բերդանկա:

Տեղական կոմիտէն՝ 1905 թ. յունուար-փետրուար ամիսներին.—

Հետեւեալ խմբերից՝ Քէօսա-տաղ 10 ռուբլի, Աղբիւր II Կամ. 85. 50, Ճարտար 74, Բագրատունի 31, Արարատ 18. 50, Իշխանի ակ 93, Դերձակ խ. անդամ Բարերարից 15, նոյն խ. անդամ Իքսից 15, Քաջալեր 27, Աղբիւր I 10, Ծովասար 15. 20, Արմատ II ճ. 45. 80, Ռուբինեան 62. 50, Արեւելեան 26. 50, Մուշեղ 30, Բայազ Աղբիւր 8, Մախեն 63, Նեփրատ 9. 50, Նորակազմ Տղմուտ գետ 15, Կարա դուման 27, Կուշ Վ-ի Անշիխեթի մարտից մնացած ապառիկը 15, Ռուիծ 28. 40, Գիւզէլ-դարա 39. 50, Արտաւազդ 19, Նոր կեանք 20. 25, Դերձակի հին ապառիկներից 3. 90, Գազան տարօնացի 29, Վարազդատ 158. 70, Մայր Արաքսի 55, Արշաւիրի խմբ. նոր անդամ Մուրատից 2, Նեփրովթ ապառիկ 1904 թ 4, Դերիկ 70, Օղակ 28, Նորակազմ Աշոտ երկաթ խ. 16, Արշաւիր խ. Զիբրայիլից 5, Շանթ 21. 50, նոյն խ. Աշխէնից 2, Սիբիրի Դանդուխտ 10, Անի Սոչխ. ճ. 18, Կարին 15, Պահանջ 8, Տղմուտ գետ 10, Մանչաւէր 59, Նեփրատ 9. 50, Մտրակ 17, եւս 31, Պողպատ 38. 40, Արշաւիր խ. Խաչոյից 5, Ցարութ. Ազիզեանից 3, եւս 3, Մի հայրենասէրից 10 ռուբլի: Գումար 1435 ռուբլի 15 կոպէկ:

Զորափորի ենթակոմիտէից՝ 1904 թ. դեկտեմբերի 7-ից մինչեւ 1905 թ. յունուարի 31-ը.— Լուսին 40 ռուբլի, Կղզի 3, Արմենակ 1, աւետիսից 1. 50, Արծուիկ 1, Վիշապ 1, Արշակ 0. 50, Վարդ 0. 50, հետեւեալ խմբերից՝ Նորածադիկ 4. 75, Արշալոյս 2. 20, Նոյեմզար 3. 80, Սաթենիկ 4. 20, Վրէժ I 15, Վրէժ II 7. 70, Բագրատունի 5. 50, Թորգոմեան 4. 45, Արշալոյս 6. 30: Գումար 364 ռ. 80 կոպէկ:

Դաշտի կոմիտէն՝ 1904 թ. յուլիսի 1-ից մինչեւ 1904 թ. դեկտեմբերի 31-ը.— Սուրբէն 150 ռուբլի, Արամ 150, Հայկ 150, Ցակոբիկ 150, Արմենակ 90, Պետո 90, Սիւնեցի 200, Բարկէն 45, Բժիշկ 45, Արարատ 40, Զարմայր 60, Զէյթունցի 30, Լուսեղէն 25, Մեքենայ 40, Ալիշան 4, Կիւրեղ 4, Պագիրկեան 15, Արամ 50, Ցակոբիկ 25, Պետո 25, Նէմօ (10 ամսական) 100, Անծրեւ 25, Սիրող 12, Տրդատ 15, հետեւեալ խմբերից՝ Հայկազեան 107, Աղբիւրեան 84, Վրէժ 112, Առիւծ 67. 50, Քաջալեր 49. 75, Ցեռեկ 40, Ազատ 20, Անեղ 22. 50, Ցոյս 10, Պարթեւ 37, Մահ 207. 50 ռ.: Ամ. քաղաքից Արշակունեաց խմբ. 48 ռ., Արծիւ խ. 64. 50, Արծրունի խ. 55, Ղեւոնդեանց խ. 181. 50 ռ.: Գումար 2646 ռուբլի 25 կոպէկ:

Նոր քաղաքից՝ Ասաբեկիչ խմբից Նէրներ՝ Բարկէն Սիւնի 1 ռուբլի, Նէվրուզ 1, Արծիւ իւր ծագումներով 5, Շողակաթ 1, Հարազատ խմբից Նէրներ՝ Փարամազ 1, Աբոյ 1, Պինկոլ 1, Զաւէն խմբից Նէրներ՝ Ն. Խ. 200, Մ. Պ. 250, Ք. Ն. Ե. Ա. Պ. Ա. 200, Ասաբեկիչ խմբ 10 ռ.: Գումար 671 ռուբլի:

Այգեստանից՝ Ղարիբ խմբ. 62. 75 ռ., Արծիւ խմբ. 28. 20, Երկաթ գիւղի Առիւծ խմբ. 30, Կօշիկից Նէր Գ. Մ. 10, Նահապետ 600 ռ.: Գումար 730 ռուբլի 95 կոպէկ:

Գաղթավայրից՝ Նորաշէն գիւղի Կարապետից 7 ռուբլի, Զապուխ գիւղի ազատութիւն խմբ. 90, Արծաթջուր գիւղի Սերոբ խմբ. 184. 50, նոյն գիւղի Սերոբ խմբ. 51. 30, Լուսնեակ գիւղի Վրէժ խմբ. 30. 40, նոյնի գիւղի Վրէժ խմբի ներկայացումից 3. 20, Հայկաշէն գիւղի Խեղճ ու կրակ խմբ. 66. 50, նոյն գիւղի Խեղճ ու կրակ խմբ. Նէր 1, Եգիպտացի խմբ. 86. 80: Գումար 570 ռուբլի 70 կոպէկ:

Ամարանոցի ենթակոմիտէն՝ 1904 թ. մայիսից մինչեւ 31 դեկտեմբերի 1904.— Արարատ խմբ. 143. 50 ռուբլի, Պանդուխտ պատանեաց խմբ. 88, Մահ խմբ. 95, Կաթ աղբիւր խմբ. 200, Սրպիչիտ խմբ. 210, Մինաս 20, Զրաբերդի Աստղիկ 78. 50, Ամարանոցի Արիւնարբու խ. 116. 50, Պանդուխտ հայրենասիրաց խմբ 321, Իզմիրեան 140, Տրդատ...ից 40, Ակնատեսից 50 հատ մսիրնի փամփուշտ, Կ. Անանուն 100, Գետ 100, Մագուստ 50, Զարբի 25, Խնամատար 100, Գլորիկ 25, Լուսին 50, Մարթա 50, Առւակ 25, Ազլոր 100, Մշակ 100, Արմատ 25, Տայի 100 փամփուշտ: Գումար 1452 ռուբլի 50 կոպէկ եւ 900 փամփուշտ:

Գաղթավայրի կոմիտէն՝ 1905 թ. յունուարի 1-ից մինչեւ փետրուարի 1-ը.— հետեւեալ խմբերից՝ Նորաշէն գիւղի Աբրօ 21. 90 ռուբլի, Գաղթավայրի Սլուկ Միհր Զաւէն 100, նոյն տեղի Հայկ 5, Սարալանջ գիւղի Վազգէն 73, Տիգրիս գիւղի Հրայր 20, Սարալանջ գիւղի Նորակազմ 29. 30, Հայկաշէն գիւղի Խեղճ ու կրակ 43. 20, Նորաշէն գիւղի Արգամ 16, նոյն տեղից Արգամ Նէր 18. 50, Ոսկանապատի վիճակախաղի № 07185 Նէր 5, Բարձրաւանդակ գիւղի Կայծակ 14. 10, Նոր գիւղի Յոժարակամ 42. 80, եւս 10, Գաղթավայրի Հրայր 2, եւս 11, Արաքս գիւղի Կայծակ 40. 50, Գաղթավայրում անանակոչութ. առթիւ 8. 50, նոյն տեղից Սօֆիից 10, Բարձր գիւղի Արամեան 15. 20, եւս 7. 50, Գաղթավայրի Գրգոյի հարսանիքից 17: 20, Գետեզր գիւղի Աղբիւր 90. 38, եւս 2. 50, Գաղթավայրի Մուրճից 1 ռ.: Գումար 604 ռուբլի 58 սանտիմ:

Ընդհանուր գումար 9508 ռուբլի 73 սանտիմ 900 փամփուշտ եւ 2 բերդանկա:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) **ԴԷՊԻ ԿՈՒԻ** . . . . . գինը 2 ֆ.

2) **ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ** Վ. Գոլոշեան, Ց. Ագրիպասեան „ 20 ս.

3) **ՊՕՏՎԻԳԻ ՅԱՐԻԶԱՍ** . . . . . „ 50 ս.

(Բազմ դէպքերի մասին, ռուսերէն լեզուով)

Դիմել »Դրօշակ»ի խմբագրութեան

Մեր խմբագրութեան հասցէն՝

Rédaction du „DROSCHAK", Genève (Suisse